

89/9

Շ-30

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ԵՐԿԵՐ

ՀԱՏՈՐ Բ.

ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

ԾՈՎԵԶԵՐԵԱՅ ԱՄԱՐԱՆՈՑԻ ՄԸ ՊԱՐՏԷԶԸ

Զախ կողմը քարէ լայն սանդուղներ կը տանին դէպի բնակարանին պատշգամբը. աջ կողմը ամբողջովին բաղեղներով ծածկըած ցածիկ պատ մը ու վանդակէ փոքրիկ դռնակ: Հեռուն, ծառերուն մէջէն, կ'երեւայ ծովուն ցոլուն հայելին: Դէպի առաջ, ահագին ծառի մը բունին տակ ոգորէ թեթեւ նստարան մը. մարմար սեղան ու պարտէզի աթոռներ. ամբողջ յատակը փափուկ դեղին աւազ:

Պայծառ առտու է:

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

Ա.

ՄԱՐԳԱՐ — (Քիչ մը կուպիտ, քիչ մը միամիտ բարի մարդ մը: Կեցած է անշարժ, աչքերը յառած գետին ու կը լսէ: Գլխուն ֆէս. անթեւ բանկունին վրայէն ամբողջ մարմինը ծածկող սպիտակ գոգնոցը հաւաքած, փաթթած է մէջքը, ձեռքեր տուփ մը):

ՎԱՀՐԱՄ — (Երեսունի մօտիկ վայելչակազմ երիտասարդ մը, հատու շարժումներով ու շարացած շեշտ մը խօսուածքին մէջ: Կը պատմէ հանգիստ) ... Իսկ իրենք սուսիկ-փուսիկ կը քաշուին անտառը ու մութը կոխելուն պէս ձորին մէջէն ճամբանին կը շարունակեն: Հիմա պահականոցին մէջը չէնք-չնորհք սարսափ է ինկեր. կ'ըսեն՝ դեւեր են, անոնց հետ գլուխ ելլել չ'ըլլար: (Քմծիծաղ) Դեւե՛ր, ի հա՛րկէ, արուեստն ու քաջութիւնը դեւ են եղեր մի՛շտ: Իսկ թէ անոնց հետ գլուխ ելլել չ'ըլլար, հա՛, ատոր կը հաւտամ. գաղափարով մը ոգեւորուած ու կեանքէն ձեռք վեր առած մարդկանց հետ գլուխ ելլել չ'ըլլար:

ՄԱՐԳԱՐ — Ի՞նչ ըսեմ, աղա՛. Աստուած յաջողէ. միայն ըզգուշ եղէք, զգո՛ւշ. կրակի հետ չեն խաղար:

ՎԱՀՐԱՄ — Խաղալու ժամանակը անցեր է: Է՛, ինչ եւ է, թողնե՛նք: (Շուրջն ու պատշգամը դիտելով) Իսկ հոս ի՞նչ կայ չը կայ: Տո՛ւնն են:

ՄԱՐԳԱՐ — (Անտարբեր ուսը ցընցելով) Է՛հ:

ՎԱՀՐԱՄ — Օրիո՞րդն ինչ բանի է:

ՄԱՐԳԱՐ — Ի՞նչ օրիորդ:

ՎԱՀՐԱՄ — Նա՛, ձե՛րը: Քանի՞ օրիորդ կայ հոս:

ՄԱՐԳԱՐ — Մարի՞ն: (Հեգնոտ) Հարո՛ւստ, սիրո՛ւն, ազա՛տ, ո՛չ ցաւ ունի, ո՛չ պակաս. անոր տերտը քեզի՞ են տուեր:

ՎԱՀՐԱՄ — (Մտասոյց) Շիտակ է: (Ջգային շարժումով մը ծառէն տերեւ մը փրցընելով) Իսկ անդին հազարներ կան, որոնք ցաւ ալ ունին, պակաս ալ, ու բեռներո՛վ:

ՄԱՐԳԱՐ — Ըսե՛նք, չիտակը խօսելով, ասոնց մէջ (արհամարհանքով տունը մատնանիչ) նորէն ամէնէն աղէկը անիկա է. քիչ մը յամառ, քիչ մը երես առած, բայց բարի սիրտ ունի: Անցած օր երկար-բարակ ինծի խօսեցուց. հարցուց մեր տան մասին, երկրի մասին, քու մասին:

ՎԱՀՐԱՄ — (Խայթուած) Ի՞մ մասին: (Ծաղրանքով) Եւ ի՞նչ:

ՄԱՐԳԱՐ — Ես ի՛նչ գիտեմ, ծնո՛ղքդ, տղայութի՛ւնդ: Զէ՛, ես մարդը մէկ նայուածքով կը ճանչնամ. առջի օրը որ աս տուեր ոտք դրի, «աս աղջիկը բարի աղջիկ է» ըսի, եւ նայէ՛, խօսքս ելաւ:

Բ.

ՀԱՐԵՆՅ — (Քառասունի հակուող լայն ու բարձրահասակ մարդ մը, կլոր մօրուփով. ականջները փխսին տակ: Կ'երեւայ սանդուղներուն վերէն: Զեռքերը տաքատին գրպանը) *Դէ՛, Էկուր դուն Արթին Էդիբ ու մի՛ բարկանար: Պէ՛ մարդ, Էս ներսը նստեր էմ կը սպասեմ ու կը սպասեմ քեզի, դուն հոս ուրիշներուն հետ անուշիկ-անուշիկ խօսքի ես բռնուեր:*

ՄԱՐԳԱՐ — (Դէմը շտապելով ձեռքի տուփը անոր կու տայ ու յարգալիր ետ կը բաշուի սանդուղին վրայ, անոր ճամբայ տալով) *Դեռ նոր եկայ, հիմա: Ճամբան պատահեցայ քրոջս տղուն:*

ՀԱՐԵՆՅ — (Սանդուղներէն իջնելով ծանր-ծանր ու միեւնոյն ժամանակ տուփը բանալով) *Հա՛, սա բու ազգականդ: Տիկի-նըս անցած օր բաներ մը կ'ըսէր: (Հակտին տակէն Վահրամը դիտելով) Ոչի՛նչ. կտրիճ տղայ կ'երեւայ: (Մարգարին) Դուն զնա՛ բանիդ:*

ՄԱՐԳԱՐ — (Դուրս):

Գ.

ՀԱՐԵՆՅ — Ի՞նչ է հրամանքիդ անունը:

ՎԱՀՐԱՄ — (Ժպտուն) *Անունս Վահրամ է, Վարդանեան:*

ՀԱՐԵՆՅ — Հա՞. Վարդանեան. ատ ի՞նչ շատ ալ Վարդան կայ դուրսեցիներուն մէջ:

ՎԱՀՐԱՄ — (Կտրուկ) *Իսկ Էս որո՞ւ հետ պատիւ ունիմ խօսելու:*

ՀԱՐԵՆՅ — (Զարմանքով) *Ատիկա կարծեմ գիտնաս պիտի:*

ՎԱՀՐԱՄ — Ի դուր տեղը կը կարծէր:

ՀԱՐԵՆՅ — (Խոժոռ ու հատիկ-հատիկ) *Ինծի Հարենց Արթին կ'ըսեն Պոլսի հրապարակին վրայ. աս ամարանոցին ալ տէրը:*

ՎԱՀՐԱՄ — Այո՛. ձեր ամարանոցը շատ սիրուն է, մանաւանդ գիրքը: Ոսփորի այս սքանչելի կտորին վրայ: Սէւ ծովի զով շուենչին դիմաց:

ՀԱՐԵՆՅ — (Շոյուած) *Իրաւացի՛ ես. լաւ ճաշակ ունիս, ինչպէս կը տեսնեմ: (Այդ միջոցին բացած է արդէն ձեռքի տուփը, հատ մը «հաւանա» կը հանէ մէջէն, կը դնէ շրթունքին, տուփը սեղանին ու կը վերցնէ լուցկին) Հա՛, ի՞նչ պիտի հարցընէի. երեւի, դո՛ւն...*

ՎԱՀՐԱՄ — (Ծիծաղկոտ) *Ես «դուն» չեմ, ներեցէ՛ք:*

ՀԱՐԵՆՅ — (Զարմանքէն անշարժ կը մնայ, վառած լուցկին ձեռքը):

ՎԱՀՐԱՄ — «Դո՛ւք»:

ՀԱՐԵՆՅ — (Առանց դիրքն ու ձայնը փոխելու) *Ես կ'ուզէի հարցընեմ. դու... ուր, երեւի կը ճանչնաք հոստեղի քոմիտէն. ի՛նչ տեսակ մարդիկ են:*

ՎԱՀՐԱՄ — *Ինչո՞ւ կը կարծէք, որ ես ճանչնամ պիտի քոմիտէն:*

ՀԱՐԵՆՅ — Է՛, անանկ: Դուրսեցի տղայ, հոս-հոն կը մտնէր կ'ելլէր, վերջապէս երիտասարդ ալ էր: Երիտասարդ մարդը ատ տեսակ բաներով կ'ոգեւորուի, յեղափոխութիւն կ'ուզէ, ազատ ըլլալ կ'ուզէ, իր պարլամենտը կ'ուզէ, ալ ի՛նչ գիտնամ:

ՎԱՀՐԱՄ — Է՛, աշխարհքիս ո՞ր ծայրը ապուշներ չը կան:

ՀԱՐԵՆՅ — Ա՛յ, ապրի՛ս: Իսկոյն կ'երեւնայ, որ հասուն տղայ ես: Շիտա՛կ է, ո՞րտեղ ապուշներ չը կան: Բայց երանի թէ միայն ապուշ ըլլային, մերինները աւագակ ալ են, աներես, լիրբ աւագակներ, աւագակներուն ամէնէն գէշը. աւագակը գոնէ գիշերը, մութին մէջէն, ծածուկ անկիւնէ մը կը յարձակի վրադ. իսկ աս սրիկաները օրը ցերեկով քու սեփական բնակարանիդ մէջը քեզի կը կոխեն: Ու դուն դեռ սուս ու փուս նստիս պիտի հետերնին խօսիս. ճա՞րդ ինչ. կատղա՛ծ մարդիկ:

ՎԱՀՐԱՄ — Միթէ՛ ձեզի նեղե՞ր են:

ՀԱՐԵՆՅ — Նեղե՞ր են, մի՞: Հապա Մարգարը քեզի չէ՞ ըսեր: Երկու հարիւր յիսուն հատիկ ոսկիս առին ձեռքէս: Ալ խընդիրք, համոզել, սպառնալիք, ոչինչ չօգնեց: «Դուք գիտէք, մեր ձեռքէն ոչինչ չի գար. մեզի այսպէս է հրամայուած»: Վրանին ալ որ նայիս, լորտ կը նմանին, հագուած սքուած:

ՎԱՀՐԱՄ — (Կատակով) Է՛, ի՞նչ վնաս ունի, պարո՛ն Հարենց, ձեզի համար երկու հարիւր յիսուն ոսկիին խօսքը կ'ըլլա՞յ:

ՀԱՐԵՆՅ — Հա՛, աղբար, բայց մարդուս ճաթիլը կու գայ. սա՛նկ խէզին մէկը գայ անցնի դիմացդ, խնդայ, խօսի ու առանց մատը մատին դպցընելու, գրպանէդ ուզածը առնէ ու երթայ: Եւ վերջապէս երկու հարիւր յիսուն ոսկին ալ ծովը նետուելիք փարա չէ: Աղէ՛կ, առնելիքնին ըլլայ. չե՛ն մարսեր. ինծի Հարենց Արթին

կ'ըսեն, չեմ ձգեր, որ մարսեն, ես անոնց քիթէն բերնէն կը հանեմ:
(Ու բարկացած կը վառէ սիկառը):

Դ.

ՄԱՐԻ — (Նուրբ ու հանգիստ աղջիկ մը, փան-փաներկու տարեկան. դէմքն ու խօսուածքը երագուն: Կու գայ ծովուն կողմէն ծառերուն մէջէն: Հագուստը թեթեւ ու հերմակ. հերմակ գոց հովանոց մըն ալ դրած է վիզը, ու թեւերն ալ երկու կողմէն անոր վրայ) Վա՛յ, պարո՛ն Վահրամ:

ՎԱՀՐԱՄ — Բարե՛ւ ձեզ, օրիո՛րդ Հարենց:

ՄԱՐԻ — Ո՞ւր էք, չէք երեւար այս քանի ժամանակ է. երեւի չախորժեցաք մեր կողմերէն:

ՀԱՐԵՆՑ — (Տիան ու գրգռուած) Իսկ դուն ի՞նքդ ուր ես. մէջտեղ չը կաս. ժամ մըն է մայրդ քեզի կը հարցընէ. ի հարկէ նորէն ծովուն ափը: Հոգիդ սիրե՛ս, սի՞րտդ ալ չի նեղանար ատանկ ժամերով աւազին վրայ. նայէ՛, հա՛, նայէ՛. ի՞նչ կայ, չգիտեմ որ: Աս ծով, աս ջուր, աս ալ աւազ. չը՛ռփ, չը՛ռփ, չը՛ռփ. քունդ ալ չի տանիր. չիտակը հինգ վայրկեան որ հոն նստիմ, իմ քունս կու գայ:

ՄԱՐԻ — Դուն ուրիշ. դուն ուր ալ որ նստիս, հինգ վայրկեանէն քունդ կու գայ:

ՀԱՐԵՆՑ — (Սեղանէն սիկառի տուփը վերցընելով) Քալէ՛, քալէ՛, պարապ մի՛ խօսիր. գնա՛ նայէ՛ մայրդ ի՞նչ կ'ըսէ: (Սանդուղի ոտփն կանգ կ'առնէ, կասկածով կը նայի Վահրամին ու տեսակ մը մտերմօրէն) Գիտէ՞ք ինչ կայ. ինչ որ խօսեցանք, աղէկ է որ մեր մէջը մնայ. բերնէ բերան խօսքը կը մեծնայ. կը հասկընաք, չէ՞. իսկ ատ անպիտանները բոլորը կապը կտրած մարդիկ են, ամէն բան կրնայ սպասուիր: (Ծիծաղկոտ) Ինչ որ խօսեցանք, սա՛նկ մեր մէջը, հա՞:

ՎԱՀՐԱՄ — (Զգուամով) Անհոգ եղէք, պարո՛ն: Ո՞վ է այս աստիճանի ողորմելի մարդոց մասին բերան բացողը:

ՀԱՐԵՆՑ — (Զմբոնելով) Ինչպէ՞ս... (Յանկարծ, անուշիկ պապելով) Այո՛, այո՛, չա՛տ ապրիս, չնորհակալ եմ: Երթա՛ս բարով, ատանկ երբեմն-երբեմն այցելեցէ՛ք նորէն մեր Մարգարը. ես չատ գոհ եմ իրմէն. աս երեք տարի է մեր ծառայութեանն է: (Սանդուղներով կը բարձրանայ ու կը մտնէ տուն):

Ե.

ՄԱՐԻ — (Լո՛ւրջ ու բոռւնցֆը սեղմած) Եղբայրս վերաւո՛րե՞ց ձեզի: Պէտք չէ որ վերաւորուիք, պարո՛ն Վահրամ:

ՎԱՀՐԱՄ — Բայց ամենեւի՛ն, օրիո՛րդ, մտքէս չ'անցնիր:

ՄԱՐԻ — (Սրտանց) Այո՛, ատանկ. չատ ուրա՛խ եմ: (Եւ յանկարծ խօսքը փոխելով) Է՛, Ի՞նչպէս էք. գո՞հ էք մեր Պոլսէն:

ՎԱՀՐԱՄ — (Ուսը կը ցնցէ) Ի՞նչ ըսեմ. ինծի քիչ կը հետաքըրքը:

ՄԱՐԻ — Ի հարկէ՛, դուք այնքան տեղ էք եղեր. այնքան տեղ էք տեսեր:

ՎԱՀՐԱՄ — Ա՛խ, ո՛չ այդ պատճառով:

ՄԱՐԻ — Հապա՞:

ՎԱՀՐԱՄ — Բայց ներեցէ՛ք, օրիո՛րդ. ձեզի չը խանգարեմ: Կարծեմ ըսին, որ ձեր մայրը ձեզի կը սպասէ:

ՄԱՐԻ — Ոչի՛նչ. փոյթ չէ:

ՎԱՀՐԱՄ — (Յանկարծ) Ուրեմն, դուք այդպէս կը սիրէք ծովը:

ՄԱՐԻ — (Զարմանք ու ժպտուն) Այո՛. ինչո՞ւ հարցուցիր. եւ չա՛տ: Ես չատ կը սիրեմ թէ՛ իր հանգիստ ժամանակը, իր օրօրքը, թէ՛ իր ալեկոծութիւնը, իր խռովքը. բայց մանաւա՛նդ այդ ալեկոծութիւնը. մարդ կարծես կը փոխուի, կը յափշտակուի, կը մոռնայ աշխարհքն ալ, ինքըզինքն ալ, իր տիրութիւնը, իր վիշտը:

ՎԱՀՐԱՄ — (Կը խնդայ թեթեւ):

ՄԱՐԻ — (Կոտորւած) Ինչո՞ւ կը խնդաք:

ՎԱՀՐԱՄ — Ներեցէ՛ք, օրիո՛րդ, բայց այնպէս տարօրինակ է այդ բառերը ձեր շրթուներին. տխրութիւն, վի՛շտ:

ՄԱՐԻ — Դուք անցած անգամ ալ ատոր նման բան մը ըսիք ինծի. եւ զիտէ՞ք, ինծի չատ զայրոյթ պատճառեց:

ՎԱՀՐԱՄ — (Լուրջ) Իրա՞ւ: Ներեցէ՛ք, կը ցաւիմ: Ես... ես միայն ըսել կ'ուզէի... ձեր շուրջը գեղեցկութիւն, առատութիւն, գուրգուրանք ու քծնանք. դուք այդպէս գեղեցիկ, այդպէս երիտասարդ. ձեզի համար ի՛նչ վիշտ, ի՛նչ տխրութիւն. ատոնք բառեր են, որոնց իմաստը դուք չգիտէք բարեբախտաբար: Բնութիւնն ու քաղաքակրթութիւնը ձեր վրան առատ թափեր է ամէն պարզեւ. դուք վայելքի ու զուարթութեան համար էք ծնուած:

ՄԱՐԻ — (Հեգնոտ) Իրա՞ն: Շատ շնորհակալ եմ:

ՎԱՀՐԱՄ — (Յանկարծ) Չէ՞, չէ՞, այդպէս չէ՞:

ՄԱՐԻ — (Սառն) Թողէ՛ք խնդրեմ: Ուրիշ բան խօսինք:

ՎԱՀՐԱՄ — (Ձեռքով) Հժգո՛հ էք. դո՛ւք ալ զժգոհ: Չէ՞. Ըսէ՛ք, ըսէ՛ք պարզ. այս բոլոր փարթամութիւնը ձեզի ձանձրոյթ կը պատճառէ ու բոլոր այս միջավայրը ձեր սրտին ոչինչ չի խօսիր, չէ՞, ըսէ՛ք: Ա՛յ, ես գիտէի, ես գգացի. ձեզի հետ առաջին խօսելուս գգացի:

ՄԱՐԻ — Ձգացի՞ք. ինչը՞:

ՎԱՀՐԱՄ — Որ դուք ալ դժբախտ մըն էք:

ՄԱՐԻ — Եւ ուրա՛խ էք, ինչպէս կը տեսնեմ:

ՎԱՀՐԱՄ — Այո՛. ինչո՛ւ ծածկեմ:

ՄԱՐԻ — Իսկ ես չէի երեւակայեր, որ դուք այդպէս չար էք:

ՎԱՀՐԱՄ — Ձա՞ր: Մի՞թէ ասիկա չարութիւն է: Թերե՛ւս. չգիտեմ: Յամենայն դէպս այսքանը ճիշդ է, որ մասնաւոր պատճառ մը չունիմ բարի ըլլալու:

ՄԱՐԻ — Ինչո՞ւ:

ՎԱՀՐԱՄ — Է՛, թողնենք:

ՄԱՐԻ — (Սրտանց) Ո՛չ. ըսէ՛ք. պէ՛տք է որ ըսէք:

ՎԱՀՐԱՄ — Ի՞նչ ըսեմ ձեզի: Ինչի՞ նման է ինծի պէս մարդուն կեանքը: Ուրիշներու մանկութիւնը գոնէ ունի իր երջանիկ երազները. ես միայն պանդխտութիւն տեսայ ու կարիք: Ամբողջ պատանութիւնս անվերջ ճանկրոտութեամբ մը եղաւ ու անվերջ թափառում, պատառ մը հացի համար ու պատառ մը ուսման: Եւ հիմա աս ի՛նչ երիտասարդութիւն է. կատղած շան գայրոյթը սրտիդ մէջ, ամբողջ մորթըւող ժողովուրդի մը մորմօքը կոկորդիզ, ակռաներուդ տակ վրէժը խածած, իսկ շուրջդ հլու, խոնարհ, լքում ու վախ. մարդ չը կայ. առնականութիւն չը կայ, հոգիի շարժում չը կայ, ազատ վերերու խոյա՛նքը չը կայ:

ՄԱՐԻ — (Երազկոտ) Այո՛, ազատ վերերու խոյա՛նքը...

ՎԱՀՐԱՄ — Կայ միայն քնազդական ապուշ ցանկութիւն մը տոկալու. թող խլեն, թող խեղդեն, թող գլխուն տան, թող առեւանգեն, ի՛նչ կրնանք ընել. միայն թէ կերպ մը դիմանանք. քարշ տանք մեր գոյութիւնը: (Բարկացած) Ինչո՞ւ. ինչի՞ պէտք այդ տեսակ գոյութիւնը: Ատիկա մա՛հ է, մահ, ամենասոսկալի մահը. հոգիին մահն է ատիկա: Կծկուեր է մեր մէջ հոգին. ո՛չ ցանկալ գիտէ, ո՛չ ձգտում ունի իր ցանկացածին պէս ապրելու, ո՛չ կոիւ գիտէ, ո՛չ դիմադրութիւն, ո՛չ նոյնիսկ մեռնիլ գիտէ այդ հոգին:

ՄԱՐԻ — (Երազկոտ) Այո՛, կծկուեր է մեր մէջ հոգին. մենք

ո՛չ ցանկալ գիտենք, ո՛չ ալ մեր ուզածին պէս ապրիլ...

ՎԱՀՐԱՄ — (Յանկարծ կը սքափի ու զարմանով շեշտ կը նայի անոր):

ՄԱՐԻ — Այո՛, մենք մեռնիլ անգամ չ'գիտենք:

ՎԱՀՐԱՄ — Ուրեմն դո՞ւք ալ համաձայն էք, օրիո՛րդ:

ՄԱՐԻ — (Միշտ երազկոտ) Ա՛, այո՛, այո՛, բացարձակապէս:

ՎԱՀՐԱՄ — Ներեցէ՛ք, ձեզի տխրեցուցի: Իսկ ես, օրիո՛րդ, չէի ուզեր ձեր յիշողութիւններուն մէջ գէշ քոչմարի մը տպաւորութիւնը թողնեմ: Եկէ՛ք քիչ մըն ալ ուրիշ բան խօսինք. աւելի ուրախ բան մը, աւելի յարմար այս սթանչելի շրջապատին: Տեսէ՛ք, ի՛նչ գեղեցիկ է այս օդը, այս ծովը, այս առտուն:

ՄԱՐԻ — (Ծանր ու մեղմ) Այո՛. այս օ՛դը, այս ծո՛վը, այս առտուն: (Յանկարծ յափշտակուած ու հատու) Այո՛, առտո՛ւ:

ՎԱՀՐԱՄ — Այսի՞նքն, օրիո՛րդ...

ՄԱՐԻ — Տուէ՛ք ձեր ձեռքը: (Իրարու ձեռք բռնած) Ուրեմն առտո՞ւ:

ՎԱՀՐԱՄ — Ձեզի ի՞նչպէս հասկընամ, օրիո՛րդ:

ՄԱՐԻ — (Հնչուն ծիծաղով մը) Ինչպէս որ կը կամենաք: (Աշխուժ կը խլէ ձեռքը. կը վազէ սանդուղներէն վեր ու սանդուղի գլխէն) Ինչպէս որ ձեզի համար ախորժելի է: (Կը մտնէ տուն):

2.

ՎԱՀՐԱՄ — (Կեցած է արձանի պէս, աչեքը շեշտ նոյն կէտին, անշարժ, անծպտուն):

ՄԱՐԳԱՐ — (Քիչ մը ետք կը մտնէ ներս. զարմացած կը նայի անոր ու մօտենալով) Ի՞նչ բանի ես հոս մինակ:

ՎԱՀՐԱՄ — (Յնցընելով) Դո՞ւն ես:

ՄԱՐԳԱՐ — Ի՞նչ կայ հոն: Դեւե՞ր ես տեսեր, թէ՞ փերիներ: Շատոնց է, որ էֆէնտին գացեր է: Ան ի՛նչ կ'ըսէր քեզի: Քալէ՛ երթանք, ներսը կը խօսինք. ձեռքս գործ ունիմ:

ՎԱՀՐԱՄ — (Կտրուկ) Ո՛չ. ես դառնալու եմ քաղաք:

ՄԱՐԳԱՐ — Վա՛յ. չէ՞ որ հիմա եկար քաղքէն:

ՎԱՀՐԱՄ — Մէ՛կ է: Ձէ՛, ես հոս մնալ չեմ կրնար: Հոս ձեր օդը, ջուրը, չգիտե՛մ. հոս ամէն բան ուրիշ տեսակ է: Արդէն գալստ ալ աւելորդ էր. ինչպէս եղաւ, չի կրցայ զիմադրել, էլայ եկայ:

ՄԱՐԳԱՐ — Ինչե՛ր կը խօսի այս խելաոր: Ի՞նչ է պատահեր

քեզի:

ՎԱՀՐԱՄ — *Խելա՞ռ... (Հեգնոտ) Երեւի', թէ չէ... է՛, ի հար-
կէ խելառու՞թիւն: (Յանկարծ աշխուժ ու գուարթ, պինդ-պինդ
զարնելով Մարգարի ուսին) Մնաս-բարով, մնաս-բարով: (Դէպի
պարտէզին դուռը):*

ՄԱՐԳԱՐ — *Վա՛յ. իրա՛ւ որ խենթ է:*

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

ԸՆԴԱՐՁԱԿ ԺԱՇԻ ՍԵՆԵԱԿ ՄԸ

Ծակատը դուռ, որ լայն ու պայծառ լուսատրուած միջանցքը կը տանի: Աջ կողմը բարձր ու խոր պատուհաններ: Ձախ պատը գրեթէ ամբողջապէս բռնած է ընկուզէ ահագին ճաշի դարանը: Սենեակին մէջտեղը մեծ ու ճաշակատր սեղանը. աթոռները նոյնպէս մեծ-մեծ ու կաշի: Սեղանին վրայ կախուած է խոշոր չվառած լամպ մը: Թանձր վարագոյրներ դրան ու պատուհաններուն: Վառ է միայն մոմ մը դարանին առջեւը:

Ա.

(Տեսարանի սկիզբին՝ միջանցքով կ'երթան ու կու գան տնեցիք, ծառայ մը, երկու սպասուհի, ափսէներով, խմիչքներով, ամաններով):

ՄԱՐԻ — (Բաց պատուհանին դէմը փռուած է օրրան աթոռին ու դէմքը հովուն տուած կ'օրօրուի, ձեռքը դրած գլխուն տակը):

ՆԵԿՏԱՐ — (Տեսնոտ կին մը նեղնակատ, գուգուած ու փարթամ կ'երեւայ սեմին վրայ) **ՉԵ՞ս լսեր. քեզի՝ կ'ըսեմ: Ելի՛ր:**

ՄԱՐԻ — (Անփոյթ օրօրուելով) **Ըսէ՛ տունը չեմ:**

ՆԵԿՏԱՐ — Տուներ չե՞ս, կէս-գիշերի՞ն:

ՄԱՐԻ — Ըսէ՛ հիւանդ եմ:

ՆԵԿՏԱՐ — Է՛, ո՞վ պիտի խաբէս:

ՄԱՐԻ — (Համբերութեամբ ելած) Ըսէ՛ մեռեր եմ:

ՆԵԿՏԱՐ — Քու խելքի՛դ է եկեր: Մտմտա՛ անգամ մը ըրա՝
ծրդ: Տիկին Մելքոնը, Թունուզները, Արալեանները. ամօթ չէ՞. ես
ի՞նչ ըսեմ անոնց:

ՄԱՐԻ — (Գրգռուած, կը դադրեցնէ օրուիլը ու կը դառ-
նայ հարսին) Կ'ըսես որ մեռե՛ր եմ, հասկըցա՞ր, մեռե՛ր եմ ես
անոնց համար: Ո՞վ են ատոնք, Թունուզ-Մունուզ, ես չեմ ճանչ-
նար, չեմ ուզեր ճանչնալ:

ՆԵԿՏԱՐ — Սըւոր նայեցէ՛ք. մարդու ալ որ չի հաւնիր. ին-
չի՞դ վրայ ես ատանկ քիթդ վեր քաշեր: Հարենցին աղջիկ՛ը, մե՛ծ
բան. ուրիշներուն աչքերը կապեցէ՛ք. ետեւինս պարտքով լեցուն.
ատոր վրա՞յ ես հպարտացեր:

ՄԱՐԻ — (Վեր թոչելով նստած տեղը) Ինչե՞ր կը խօսիս,
ա՛յ կնիկ: Հիւր է եկեր, գնա՛ ներս, նստէ՛, խօսէ՛. ատանկ նշանա-
ւոր մարդիկ, գնա՛, ինծմէ՛ ի՞նչ կ'ուզես: Ես չեմ ուզեր, չէ՛, ես
կշտացեր եմ ատ բոլորէն. մինչեւ հոս, կոկորդս է հասեր ձեր ու
անոնց ըսածն ու խօսածը:

Բ.

ՀԱՐԵՆՅ — (Ներս մտնելով) Նորէն կըզւըտի՞ք հարս ու
տալ:

ՆԵԿՏԱՐ — (Վրայ փրթելով) Հա՛. կը կըզւըտի՛նք, քէ՞Քդ
եկաւ. քեզի ալ խօսելու բան է պէտք:

ՀԱՐԵՆՅ — Ձէ՛, չէ՛, ես քեզի մեղայ, ըսողը ես չլի. բարի
յաջողո՞ւմ. կըզւեցէ՛ք: (Կ'ուզէ դուրս):

ՆԵԿՏԱՐ — Կեցի՛ր: Կեցի՛ր ու լսէ՛. նայէ՛ բուրիկդ ինչե՛ր
կ'ըսէ. նայէ՛, ի՛նչ նորութիւններ, բերանդ բաց մնայ:

ՀԱՐԵՆՅ — Հապա՛ նայինք:

ՄԱՐԻ — (Յոգնած ու աղերսող) Է՛, թողէք ինծի հանգիստ:
Ի՞նչ կ'ուզէք ինծմէ՛. թողէ՛ք ինծի իմ մտքիս հետ:

ՀԱՐԵՆՅ — Մտքինդ ի՞նչ է որ:

ՄԱՐԻ — Քեզի՞ ինչ. որ ըսեմ՝ ի՞նչ պիտի հասկնաս:

Գ.

ՄԱՅՐԸ — (Գէր ու տկար, գեղեցկութեան մնացորդ. շտապելով կը մտնէ սենեակը) **Շո'ւտ, շո'ւտ, ներս.** Հիւրերը բոլորովին մինակ են մնացեր:

ՆԵԿՏԱՐ — (Ծաղրելով իր ամուսինը) Ա'ռ քեզի: Հասկցա՞ր հիմա: Աս մէ'կ: (Զանչ տալով տալոջը) Ը'հ, վերի արտին ցորենը: (Դուրս):

Դ.

ՄԱՅՐԸ — Ի՞նչ կայ նորէն: Աս լամպը ինչո՞ւ չեն վառեր:

ՄԱՐԻ — Ես ըսի չվառեն:

ՄԱՅՐԸ — Ինչո՞ւ:

ՄԱՐԻ — Ասանկ աւելի աղէկ է, աւելի առանձին. ձգէ':

ՀԱՐԵՆՅ — Կ'երեւայ, չուտով ճգնաւոր ես դառնալու:

ՄԱՐԻ — Ի՞նչ կայ որ: Աս անհամ-անհոտ կեանքէն հազար անգամ աւելի աղէկ չէ՞:

ՀԱՐԵՆՅ — Անհամ-անհոտը դուն ինքդ ես, ի'նքդ, կեանքը ինչո՞ւ կը մեղադրես: Ո'չ քաղաքավարութիւն գիտես, ո'չ մարդավարի ըսել-խօսիլ, ո'չ շուրջդ եղող երիտասարդներուն հետ վարուել: Ի՞նչ բանի վրայ կը տրտնջաս: Փա՛ռք Աստծու, ի՞նչդ ենք պակաս ըրեր:

ՄԱՅՐԸ — Ձգէ', ձգէ' աղջիկը հանգիստ. գնա' ներս:

ՀԱՐԵՆՅ — Չգիտե՛մ: Քանի կ'երթայ այս աղջիկը տարօրինակ կը դառնայ: Իսկ աս տաս-տասնըհինգ օրը բոլորովին է անհամցեր: Շատ հո'գս: (Դուրս):

Ե.

ՄԱՅՐԸ — Լաւ բնութիւնն չէ, աղջիկս, շիտակ կ'ըսէ: Հայրդ ալ ճիշդ քեզի պէս էր, ահա՛, ի՞նչ տարաւ աշխարհքէն: Ըսէ՛, խօսէ՛, կե՛ր, խմէ՛, քէֆդ նայէ՛: Աշխարհքը աս է որ կայ: Ալ ուրիշ ի՞նչ կ'ուզես, ի՞նչ կը մտմտաս, ի՞նչ կը փնտռես:

ՄԱՐԻ — Իրա՞ւ: Աշխարհքը ա՞ս է, որ կայ. ասանկ անշա՛րժ, ասանկ պաղա՛ծ, ասանկ տափա՛կ: Ոչ, մայրի՛կ, աշխարհքը աս չէ, որ կայ: Աշխարհքը մէկ ուրիշ տեսակ է, ես դեռ կը սպասեմ, աշխարհքը դեռ պիտի գայ. աւելի տա՛ք, աւելի թա՛րմ, աւելի վե՛ր... Անիկա դեռ պիտի գայ: (Կոտորւած) Եթէ՛ չը գայ, եթէ՛ պիտի չը գայ, ալ ինչի՞ է պէտք այս կեանքը:

ՄԱՅՐԸ — (Յեմուելով աղջկայ աթոռին ու շոյելով անոր մագերը) Ատանկ մի՛ խօսիր զաւա՛կս. մե՛ղք է: Նորէն փառք տուր Աստծու: Ելի՛ր, ելի՛ր, հոգի՛ս. գնա քիչ մը վրադ-զլուխդ կարգի դիր ու ներս եկուր: Աղէկ չէ, որ չերեւաս: (Կը համբուրէ ճակատը ու դուրս):

Զ.

ՄԱՐԻ — (Անշարժ ու անծպտուն փռուած է իր աթոռին):

ԵՐՈՒԱՆԴ — (Քիչ մը ետքը կ'երեւայ դրան մէջ. ածիլ-ուած դէմք, երկար մագեր, երկար սեւ փողպատ) *Կարելի՞ է, օրիո՛րդ:*

ՄԱՐԻ — (Առանց դիրքը փոխելու) Ո՛չ:

ԵՐՈՒԱՆԴ — Վա՛յ, ներեցէ՛ք: (Քաշուիլ կ'ուզէ):

ՄԱՐԻ — (Առանց դիրքը փոխելու) Եկէ՛ք, եթէ՛ միայն ձեզի դրկող չէ եզեր:

ԵՐՈՒԱՆԴ — (Մօտենալով) Ղրկո՞ղ. քա՛ւ լիցի: Ըսին միայն քիչ մը տկար էք:

ՄԱՐԻ — Սո՛ւտ են ըսեր:

ԵՐՈՒԱՆԴ — (Քմծիծաղ) Այո՛, կը հասկնա՛մ. ներսի օդը ա՛յնպէս, քիչ մը... ի՞նչպէս ըսեմ... Թէեւ պատուհանները բաց են:

ՄԱՐԻ — Պատուհանները բաց են, բայց հոգիները գոց:

ԵՐՈՒԱՆԴ — (Ժպտուն) Կարճ ու ազդու:

ՄԱՐԻ — Նստեցէ՛ք:

ԵՐՈՒԱՆԴ — Շնորհակալ եմ: (Աթոռ մը առնելով):

ՄԱՐԻ — Ո՛չ, հո՛ս ինծի մօտիկ:

ԵՐՈՒԱՆԴ — (Նստելով) Թէեւ... ատիկա քիչիկ մը հակառակ է իմ սկզբունքներուս:

ՄԱՐԻ — Հակառակ. ի՞նչը:

ԵՐՈՒԱՆԴ — Կրակէն ո՛չ այնքան հեռու, որ մըսիս, ո՛չ ալ այնքան մօտիկ, որ այրիս:

ՄԱՐԻ — Է՛, դուք միակ մարդն էք, որուն հետ խօսիլ կարելի է, դուք ալ լուրջ խօսիլ չգիտէք:

ԵՐՈՒԱՆԴ — Կը ցաւիմ, օրիո՛րդ: Բոլոր առաքինութիւնները միասին չեն ըլլար:

ՄԱՐԻ — (Յանկարծ ուղղուելով ու ջերմ) Իսկ է՛ս, ես ընդհակառակը, կ'ատեմ ձեր այդ գոլ սկզբունքը:

ԵՐՈՒԱՆԴ — (Ծիծաղելով) Պո՛ղ:

ՄԱՐԻ — Այո՛: Թէ սառն է՝ սառոյց, թէ տաք է՝ կրակ. բայց ո՛չ երբեք այդպէս գոլ ու գաղջ:

ԵՐՈՒԱՆԴ — Բայց սառոյցն ու կրակը կը մաշեն մարմինը: Եւ այն ատեն ի՞նչ կը մնայ ձեր այդ սքանչելի կերպարանքէն:

ՄԱՐԻ — Թողէ՛ք այդ յիմար հաճոյախօսութիւնները, թէ չէ՛, ա՛յ, ձեզի ալ կը դրկեմ ներս, անոնց քովը:

ԵՐՈՒԱՆԴ — (Լուրջ) Ներեցէ՛ք: Ես իբրեւ քանդակագործ կը պաշտեմ մարմնի ձեւերն ու անոնց գեղեցկութիւնը. ու կ'ատեմ այն բոլորը, որ այդ ձեւերը կը խաթարէ. ես կ'ատեմ մահը, ես կ'ատեմ վիշտը, ես կ'ատեմ բոլոր բուռն յուզումները:

ՄԱՐԻ — Իսկ ես քանդակագործ չեմ, պարո՛ն Երուանդ:

ԵՐՈՒԱՆԴ — Բայց մոտէլ, եւ սքանչելի՛ մոտէլ: Եւ վերջապէս մի՛ մոռնաք, որ սառն ու հուրը կը մաշեն եւ կեանքը: Այդ բեռներով քառասունի ալ չէք հասնիր:

ՄԱՐԻ — (Ծիծաղ) Քառասո՛ւն. կեանքը քառասո՛ւն տարի: (Ոգեւորուած) Կեա՛նքը, բարեկա՛մ, օ՛ր մըն է միայն, օ՛ր մը:

ԵՐՈՒԱՆԴ — Խօ՛սք է ատիկա: Երբ գլուխնիդ կապած նրստիք անկիւնը ծալլապատիկ եւ երբ ձեր թոռները գան ձեր ճերմակ մազերը քաշքշելու, ա՛յ, ան ատեն կը խօսիմ ձեզի՛ հետ կեանքի մասին:

ՄԱՐԻ — (Կ'իյնայ աթոռին ու օրուելով) Խորհուրդ կու տամ, որ հիմակւրնէ փնտռէք ձեզի ուրիշ խօսակից:

Է.

ՄԱՐԳԱՐ — (Սեմէն) Օրիո՛րդ:

ՄԱՐԻ — Ի՞նչ է:

ՄԱՐԳԱՐ — Վահրամն է եկեր. կ'ըսէ՝ ըսելիք ունի ձեզի:

ՄԱՐԻ — (Ոտի) Աղէ՛կ. կանչէ՛ հոս:

ՄԱՐԳԱՐ — (Վարանոտ) Հո՞ս:

ՄԱՐԻ — Այո՛. բեր հո՛ս:

ՄԱՐԳԱՐ — Հիմա՞:

ՄԱՐԻ — Այո՛. իսկո՛յն:

ՄԱՐԳԱՐ — (Դուրս):

Ը.

ԵՐՈՒԱՆԴ — Ձեզի չը խանգարե՞մ:

ՄԱՐԻ — Դեռ ո՛չ: (Ժպտուն) Երբ որ խանգարէք, ձեզի իմաց
կու տամ: Մանօ՛թ է ձեզի:

ԵՐՈՒԱՆԴ — Մի՞թէ: Ո՞վ է որ:

ՄԱՐԻ — Մեր Մարգարի քրոջ տղան:

ԵՐՈՒԱՆԴ — (Հեզմոտ) Ներեցէ՛ք, պատիւ չունիմ ծանօթ
ըլլալու:

Թ.

Վահրամ ու Մարգար կ'երեւան դրան մէջ: Մարգար կը
քաշուի ետ: Վահրամ քայլ մը կ'ընէ ներս եւ օտարի հանդիպե-
լով, կանգ կ'առնէ ունքերը կիտած:

ԵՐՈՒԱՆԴ — (Աշխուժ դէմը վազելով) Վա՛հ, Վահրա՛մ:

ՎԱՀՐԱՄ — (Զարմացած) Դու՛ն հոս ի՞նչ գործ ունիս:

ԵՐՈՒԱՆԴ — Ես դրացի մարդ եմ, իմ մէկ ոտքս միշտ հոս

է: (Երկմիտ) Դո՞ւն հոս ինչ գործ ունիս:

ՄԱՐԻ — Իսկ ինծի արդէն բոլորովին մոռցաք:

ՎԱՀՐԱՄ — (Օրիորդին ձեռք տալով) Այս քանի տարի է, չէի տեսեր: (Երուանդին) Երե՞ք, չո՞րս: Հը՛. քու Փարիզի նշանաւոր ատըրլիէդ մի՞տքդ է:

ԵՐՈՒԱՆԴ — Բայց ամենեւին չե՛ս փոխուած: Անշո՛ւշտ, միշտ ալ նոյն իտէալիստը, չէ՞: Ա՞խ, դո՛ւն: Աւարտեցի՞ր:

ՎԱՀՐԱՄ — Ո՛չ, ինծի պէս մարդիկը իրաւունք չունին աւարտելու: Եւ վերջապէս (ձեռքը թափ տալով) ինչո՞ւ համար: Իսկ դո՞ւն. նորէն քու ցեխերո՞ւղ հետ ու ծեփերուդ:

ԵՐՈՒԱՆԴ — Ի հարկէ՛: Բանով մը կեանքը պէտք է լեցրենք, թէ չէ՞. ցեխը ինչո՞վ է պակաս: Շա՞տ ժամանակ է, որ Պոլիս ես:

ՎԱՀՐԱՄ — Այսպէ՛ս, ամի՛ս մը:

ԵՐՈՒԱՆԴ — Ու կը մնաս երկա՞ր:

ՎԱՀՐԱՄ — Ո՛չ:

ԵՐՈՒԱՆԴ — Եւ ո՞ւր:

ՎԱՀՐԱՄ — Երկիր:

ԵՐՈՒԱՆԴ — Երկի՞ր. հիմա՞. այդ հալածանքին ու սարսափներուն մէջ:

ՎԱՀՐԱՄ — Այդ հալածանքին ու սարսափներուն մէջ ամբողջ ժողովուրդ մը կ'ապրի:

ԵՐՈՒԱՆԴ — Ատա՛նկ է, բայց... բայց վերջապէս դուն... Եւ ի՞նչ ես ընելու հոն:

ՎԱՀՐԱՄ — Երեւի, ընելիք մը կը ճարուի:

Ժ.

ՀԱՐԵՆՅ — Պարո՛ն Երուանդ, հո՞ս էք: (Աչքերը լարած կը նայի ներս եւ յանկարծ վահրամը նանչնալով կ'ապշի):

ԵՐՈՒԱՆԴ — Հո՛ս ենք: Հրամեցէ՛ք դուք ալ: Մանօթ չէ՞ք:

ՀԱՐԵՆՅ — (Խէթ) Կը ճանչնամ. բարե՛ւ: Շատ աղէկ էք ըրեր, որ եկեր էք. երեւի եկեր էք մեր Մարգարին օգնելու:

ՄԱՐԻ — (Առաջ գալով եւ կտրուկ) Ո՛չ. եկեր է ինծի հետ տեսակցելու:

ՀԱՐԵՆՅ — (Կատղած, բայց ինքզինքն զսպելով) Ա՛խ. որ այդպէս է, չը խանգարենք: Պարո՛ն Երուանդ, մենք նստելու ենք

վիստի. չէի՞ք ընկերանար:

ԵՐՈՒԱՆԴ — Սիրով. ես կոհե՛լ փախչողը չեմ. երթա՛նք: Վահրա՛մ, մենք հոս անմիջապէս դիմացը կը բնակինք, երթալէդ առաջ եկո՛ւր անգամ մը տեսնուի՛նք:

ՎԱՀՐԱՄ — Կը տեսնուի՛նք:

ՀԱՐԵՆՅ — (Յամառ կը դիտէ մէկ մը Վահրամը, մէկ մը իր բոյրը, մինչեւ որ դուրս կ'ելլէ Երուանդին հետ միասին):

ԺԱ.

ՎԱՀՐԱՄ — (Երբ միւսները բոլորովին կը հեռանան, ծանր կը դառնայ աղջկան) *Ինծի կանչե՛ր էիք:*

ՄԱՐԻ — Իսկ եթէ չը կանչէի, դուք ինքներդ գալու չէի՞ք:

ՎԱՀՐԱՄ — Ո՛չ:

ՄԱՐԻ — Գիտէի՛: (Ժպտուն) Կը տեսնէք, որ մուտք ունիմ ձեր հոգին:

ՎԱՀՐԱՄ — (Յանկարծ) Օրիո՛րդ Հարենց, լաւ է վերջ տանք այս խաղին: Ես կը հասկնամ, դուք սովոր էք շրջապատուած ու պաշարուած ըլլալու. ես կը հասկնամ, որ դուք վարժուած էք ամէնուն հետն ալ այսպէս... Ինչպէս ըսեմ... Բայց ես, ես չեմ կրնար, ինչպէս ամէնքը. ես ուրիշ կերպ կը հասկնամ ձեր վարմունքը: Մովը թողած օրէն ջուր չը տեսած սպունգի պէս ծարաւ է հոգիս. ծարաւ գգուանքի, անուշ խօսքի մը, ջերմ ակնարկի մը: Ես... ես չեմ կըրնար, ինչպէս ամէնքը. ես... (Խօսքը կը կտրէ ու քիչ մը լուռ):

ՄԱՐԻ — (Աչքերը գետնէն ծանր բարձրացնելով խօսակցին) *Խօսէ՛, խօսէ՛:*

ՎԱՀՐԱՄ — (Խելագարի պէս դէպի աղջիկը վազելով) *Մարի՛... (Ինքզինքնը գսպելով) է՛, ես գիտեմ, որ վերջը յիմարութիւն մը բնելու եմ անպատճառ: Բայց ինչո՞ւ. ի՞նչ իմաստ: Դուք զեռ չգիտէք այ՛ ո՞վ եմ ես, ուրիշ՞ կու գամ եւ կ'երթամ ո՞ւր:*

ՄԱՐԻ — Եւ ինչի՞նչ պէտք է գիտնալը: Ինծի՞ ինչ: Ես գիտեմ միայն, որ դուն եկեր ես, որ դուն հոս ես: Երկա՛ր, չա՛տ երկար եմ սպասեր քեզի, անվե՛րջ չլուսցող գիշերներով, ամբողջ երազուն ցերեկներով. տարինե՛ր, տարինե՛ր:

ՎԱՀՐԱՄ — Տարինե՞ր:

ՄԱՐԻ — Այո՛: Իմ անուրջներս ըսեր էին ինծի, որ գայիր պիտի, եւ գայիր պիտի ծովէն, անպատճառ ծովէն, այդ ալիքներուն

վրայէն, երիտասարդ, ուժեղ ու գեղեցիկ. գայիր պիտի ու դուրս պիտի քաշէիր ինծի իմ մոխրագոյն տաղտուկէս. քաշէիր ինծի դուրս, սեղմէիր կրծքիդ, թող ըլլայ օր մը, թող ըլլայ անգամ մը. երբ ես ալ ապրէի պիտի վերջապէս, հասկընայի պիտի թէ ինչո՞ւ է տուած մեզի կեանքը, թէ ինչո՞ւ այսպէս յիմարի պէս կը թրփրոտայ սիրտս կրծքիս տակ, թէ ատ ի՞նչ կարօտ է ու սպասում, որ կ'այրէ ինծի: Գոնէ օ'ր մը, գոնէ օ'ր մը, երբ ես ալ ապրէի պիտի վերջապէս:

ՎԱՀՐԱՄ — (Կարծես բարկացած, կը խլէ աղջկայ ձեռքը):

ՄԱՐԻ — Կը յիշե՞ս մեր առաջին հանդիպումը ծովուն ափը, երբ մակոյկդ խրեցաւ մեր ծովեզրի աւազին ու դուն դուրս ցատկեցիր քու պարզ շարժումովդ. եկար զէպի ինծի ու հարցուցիր Մարգարը քու այդ պարզ ու շիտակ լեզուովդ: Այդ վայրկեանէն քու ամէն մէկ խօսքդ սրտիս է խօսեր ու քու ամէն մէկ նայուածքդ քու հոգիդ է բացեր ինծի: Եւ ինչքա՛ն նման է այդ հոգին իմինիս: Դուն ճիշդ կ'ըսէիր, այս հարուստ միջավայրին մէջ ես միշտ աղքատ եմ եղած, ճիշդ ա՛յնքան, որքան եւ դուն:

ՎԱՀՐԱՄ — Ես աղքատ. ո՞վ ըսաւ քեզի: Ես հարուստ եմ հիմա: Մարի՛, անչա՛փ հարուստ, ճիշդ այնքան որքան եւ դուն:

ՄԱՐԻ — Ատոր համար էր, որ իրար կը հասկնայինք ու կը փնտռէինք իրար:

ՎԱՀՐԱՄ — (Յանկարծ գրկելով ու համբուրելով) Եւ զըտա՛նք իրար, գտա՛նք, գտա՛նք:

Կը մնան գրկուած, լուռ: Լուռ ալ կը բաժնուին իրարմէ ու աղջիկը կը մօտեցայ քաց պատուհանին: Վահրամ քայլ մը ետ կ'ընէ ու կը մնայ անշարժ, ձեռքը ճակտին:

ՄԱՐԻ — (Մագերը ետ ընելով ճակտէն ու խոր շունչ առնելով թարմ օդին մէջ) Ա՛խ, Աստուած իմ:

ՎԱՀՐԱՄ — Ո՛հ. դուն պէտք է գիտնաս եւ հենց առաջին վայրկեանէն: Ես կորսուած մարդ եմ, Մարի՛. ես տուեր եմ գլուխս ալ, ուժերս ալ, օրերս ալ եւ բոլորը ինչ որ ունիմ: Ես իմս չե՛մ, Մարի՛, ես երթալու եմ չուտով, ես եկած եմ երթալու համար. երթալու, մեռնելու, որովհետեւ գնացողին դարձ չկայ, հոնկէ դարձ չկայ:

ՄԱՐԻ — (Վրան վազելով ու գոցելով անոր բերանը) Մի՛, մի՛, թո՛ղ, թո՛ղ հիմա այդ բոլորը, թո՛ղ աշխարհքը, թո՛ղ ամէն բան, մոռցի՛ր ամէն բան: Եթէ կ'ուզես՝ կը խօսինք ուրիշ անգամ: Հիմա լռէ՛, լռէ՛ ու նայ՛ աչքերուս. շիտա՛կ, խո՛րը, խո՛րը, այդ-

պէ՛ս... այդպէ՛ս... (Երկու ձեռքով անոր գլուխը բռնած) Ի՛մս.
ամբողջովի՛ն իմս. միա՛յն իմս: (Քիչ մը լուռ: Վերջը կամաց կը
թողնէ գլուխը ու մեղմ) Դէ՛, հիմա գնա՛. ալ ո՛չ մէկ խօսք. գնա՛.
Թող ո՛չ-որ ու ոչի՛նչ չաղարտէ մեր այս վայրկեանը: (Կը համբուր-
ուիմ: Շշուկով) Գնա՛... գնա՛...

Կամաց ու խիստ հանդարտ կը բաժնուին իրարմէ ու ջերմ
կը նային իրար, մինչեւ որ Վահրամ ծանր կը հասնի դրանը ու
գլխու վերջին շարժումով մը կ'ելլէ դուրս: Մարի կեցած է արձա-
նի պէս, առանց դիրքը փոխելու եւ ո՛չ-մէկ շարժում:

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

ՓՈԶՐ ՈՒ ՀԱՍԱՐԱԿ ՎԱՐՁՈՒ ՍԵՆԵԱԿ ՄԸ

Դոճեր ճակտեմ ու մէկ կողմէն: Մահճակալ մը, քանափէ, սեղան, երկու աթոռ, մէկ-երկու պայուսակ: Ամէն ինչ խիստ հասարակ ու մաքուր:

Ա.

ՍԱՐԻԿԵԱՆ — (Կարճահասակ, ծանրաշարժ երիտասարդ մը՝ խելացի աչքերով: Նստած է սեղանին առջեւը ու կը հետեւի ընկերոջը ըսածին, աչքերը սեղանին յառած, ուր մատովը բան մը կը գծէ):

ՎԱՀՐԱՄ — (Կ'երթեւեկէ սենեակին մէջ, մերթ կանգ առնելով ընկերոջ դէմը) է՛, գէշ ու կոպիտ բան մը կայ մարդուս հոգիին խորը, ինչ կ'ուզես ըսէ: Ե՞ս, հիմա ուրախանա՞մ մեր գործերու այսպէս ձախ երթալէն, թէ ինչ է, ամիս մը կամ երկու ղեռ հոս եմ մնալու: Բայց կը հասկընա՞ս:

ՍԱՐԻԿԵԱՆ — Արդէն բոլորովին աւելորդ նրբագգացութիւն է ըրածդ: Դուն ի՞նչ յանցանք ունիս, որ մարդիկ են բռնուեր եւ որ քու երթալդ յարմար չէ այժմ. պատահմո՛ւնք:

ՎԱՀՐԱՄ — Անշո՛ւշտ: Բայց որ սիրտս իր խորքէն գոհ է այսպէ՞ս: Ա՛, ես կ'ուզէի խեղդեմ այս զգացումը, կ'ուզէի այրեմ, խարեմ, որ հետքն ալ չմնար: Բայց ի՞նչ ընեմ, ո՛չ խեղդել կրնամ, ո՛չ կեղծել:

ՍԱՐԻԿԵԱՆ — Է՛, սիրելի՛ս, մարդ ես դուն ալ:

ՎԱՀՐԱՄ — Այո՛, շատ անպիտան բան է այդ մարդը: (Քիչ մը լուռ) Շատ անպիտան եւ կեա՛նքը: Ճիշդ հիմա՞ պիտի հանդիպէր այդ էակը ճամբուս վրայ, հիմա՞, հո՞ս, երբ մէկ ոտքս շոգե-նաւն է արդէն: Եւ ինչո՞ւ, ինչո՞ւ, ի՞նչ իմաստ, ի՞նչ կարիք. միայն աւելի վիշտ պատճառելու համար, նո՛ր վիշտ ու նո՛ր դառնութիւն. ուրիշ ի՞նչ:

ՍԱՐԻԿԵԱՆ — Ուրեմն կը ցանկայիր, որ այդ աղջիկը դէմդ ելած չըլլա՞ր:

ՎԱՀՐԱՄ — (Մեկամաղձոտ) Միամի՛տ: Ինչի՞ է նման իմ կեանքը, իմ անձնական կեանքը, առանց այս երկու շաբթուան: Ան-ծայր անապատ մը, չոր ու տոչոր: Ասիկա միակ օազն է, Սարի՛կ, միակ օազը իմ ամբողջ ճամբուս վրայ:

ՍԱՐԻԿԵԱՆ — (Տխուր ու երագուն) Օա՞գ... լա՛ւ ըսիր:

ՎԱՀՐԱՄ — Բախտի օազը, ուր վայելքի աղբիւրը կը գլգլայ: (Բեկում): Բայց ահա, աւագէն յոգնած, խորչակէն կիզուած, հագիւ ոտք դրած այդ դալար վայրը, հագիւ հպած չոր շրթունքդ այդ յորդ աղբիւրին, դէ՛, ելի՛ր նորէն ոտքի, մա՛րդ, ելի՛ր ու գնա՛ ճամբադ, քու ճամբադ մահու, տապի ու տառապանքի:

ՍԱՐԻԿԵԱՆ — (Մռայլ ու խիստ) Մի՛ տրտնջար: Չէ՞ որ դուն խմեցիր բախտի այդ աղբիւրէն. բայց որքա՛ն, որքաննե՛ր կան, որ քու ճամբէդ կու գան ու կ'երթան ու այդ միրաժը չտեսան անգամ:

ՎԱՀՐԱՄ — (Յանկարծ բուռն շարժումով մը կը դառնայ ընկերոջը ու կարեկցոտ) Սարի՛կ... (Շեշտ ու լուռ կը նային իրար: Կը զարնուի դուռը):

Բ.

ՎԱՀՐԱՄ — Մտէ՛ք:

ՄԱՐԻ — (Սեմէն, ժպտուն) Կարելի՞ է:

ՎԱՀՐԱՄ — (Դեմը վազելով) Վա՛յ, ես քեզի դեռ ուշ կ'ըս-պասէի:

ՄԱՐԻ — (Սարիկեանին, մտերիմ) Բարե՛ւ, ձեզի: (Վահրա-

մին) Ուշ գալ չէի կրնար. արդէն երկար ալ չեմ մնալու. հանդիպեցայ միայն քանի մը վայրկեանով:

ՍԱՐԻԿԵԱՆ — Ինծի կը ներէք: (Կողմնակի դռնէն դուրս):

Գ.

ՎԱՀՐԱՄ — (Քաշելով աղջկայ ձեռքէն դէպի ֆանափէն) Եկո՛ւր, եկո՛ւր, այնպէս կարօտեր եմ քեզի, այնպէս կարօտեր եմ քեզի, կարծես օր չէ, տարի է: (Կը գրկէ ու կը նստին իրար կից):

ՄԱՐԻ — Ինչո՞ւ այդպէս տխուր ես նորէն:

ՎԱՀՐԱՄ — Ե՞ս, տխու՞ր. ամենեւի՛ն:

ՄԱՐԻ — Է՛. ես չգիտե՛մ: Ա՛յ, այս ծալքը ունքերուդ մէջտեղը, ա՛յ: (Կը շփէ տղու ճակատը) Ի՞նչ է պատահէր նորէն:

ՎԱՀՐԱՄ — Ոչի՛նչ, ոչի՛նչ. քանի որ դուն քովս ես՝ ոչի՛նչ:

ՄԱՐԻ — Իսկ երբ քովդ չե՞մ:

ՎԱՀՐԱՄ — (Հառաչելով) Հա՛, այն ատեն ասանկ ախորժելի հիւրեր չեն ինծի այցելողները. տեսա՛կ մը բողոք, ինքս ինծմէ՛ դըժգոհութի՛ւն, ներքին խայթի պէս բաներ...

ՄԱՐԻ — (Ետ փաշուելով ու յանդիմանական) Վահրա՛մ...

ՎԱՀՐԱՄ — Այո՛, այո՛. ես գիտեմ. ինծի պէս մարդը իրաւունք չունի անձնական երջանկութեան. այս ճամբով գացողը իրաւունք չունի ի՛ր երջանկութիւնը փնտռելու:

ՄԱՐԻ — Ինչո՞ւ, ինչո՞ւ. ընդհակառա՛կը: Դուն մինչեւ հիմա տուեր ես ամէն բան. դուն մինչեւ հիմա ըրեր ես ամէն բան քու ժողովուրդիդ համար. դուն վճարեր ես քու պարտքդ: Հիմա քիչ մըն ալ ապրէ քեզի համար. թող գան հիմա քիչ մըն ալ ուրիշները, թո՛ղ չարչարուին քիչ մըն ալ ուրիշները:

ՎԱՀՐԱՄ — (Խոժոռ) Ուրիշները իրենց տեղը, ես ալ իմ տեղս:

ՄԱՐԻ — Գիտե՛մ, գիտե՛մ, հոգի՛ս. գիտե՛մ որ գործի հոգին ես. կը կարծես աչք չունի՞մ: (Հպարտ) Եւ արդէն ուրիշ կերպ կարելի ալ չէ. բոլոր ընկերներդ կը նային քեզի, դո՛ւն ես գլուխը, դո՛ւն, դո՛ւն, դո՛ւն իմ քա՛ջս, դուն իմ արե՛ւս, դուն իմ հերո՞սս:

ՎԱՀՐԱՄ — (Կոտորուած ու ծաղրելով) Ի հարկէ, հերո՞ս:

ՄԱՐԻ — Բայց ճիշդ ատոր համար ալ քեզի խնայես պիտի:

ՎԱՀՐԱՄ — Մարի՛, նորէ՞ն հին երգը:

ՄԱՐԻ — Աղէ՛կ, աղէ՛կ, մի՛ բարկանար. կ'երթա՛ս, երկիր

ալ կ'երթաս. ե'տքը, գարունքի'ն: (Փայտուն) կ'երթա'նք միասին:

ՎԱՀՐԱՄ — Միասի՞ն. դո՞ւն: Երեխա՛յ:

ՄԱՐԻ — Ինչո՞ւ. միթէ անկարելի՞ է:

ՎԱՀՐԱՄ — (Կտրուկ) Ատոր մասին ա'յ խօսք չըլլայ, Մա-
րի: Այդ ուղղութեամբ այլեւս չմտածե'ս: Երբե'ք: Իմ թեւերս պէ'տք
է ազատ ըլլան հո'ն:

ՄԱՐԻ — Աղէ'կ, աղէ'կ, ձգէ', մի' մտածեր: Թող հիմա ապ-
րի'նք: Թո'ղ որ ծծենք այս վայրկեանները մինչեւ մրուրը, իսկ վեր-
ջը թող գայ, ինչ որ գալու է: (Ու բոլոր ուժովը կը գալարի
տղուն վիզը: Լուռ: Կը լսուի դրան մեղմ բաղխումը: Երկուքն
ալ կը ցնցուին ու կը բարձրացնեն գլուխնին):

ՄԱՐԻ — (Բնագդական սարսափով մը ու փսփսուեով)
Եկա'ւ... եկա'ւ...

ՎԱՀՐԱՄ — (Շուար) Ո՞վ:

ՄԱՐԻ — Զգիտե՛մ... (Ոտքի կ'ելլէ աչքերը շփելով ու ջանա-
լով վախը գսպէ) Ի'նքս ալ չգիտեմ: (Նորէն կը լսուի բաղխումը,
քիչ մը աւելի ուժեղ):

ՎԱՀՐԱՄ — Մտէ'ք:

Դ.

ՏԱՆՏԻԿԻՆԸ — (Զոր կերպարանք մը, կծկուած շրթունք-
ներով) Ան մեծ մօրուքով տղան է, լայն գլխարկով:

ՎԱՀՐԱՄ — Ո՞վ, ի՞նչ: Հա', աղէ'կ, աղէ'կ: Տարէ'ք ընկերո-
ջըս սենեակը. ըսէ'ք հիմա կու գամ:

ՏԱՆՏԻԿԻՆԸ — (Դուրս):

Ե.

ՄԱՐԻ — (Հանգիստ) Ո՞վ է:

ՎԱՀՐԱՄ — Ընկե'ր մը:

ՄԱՐԻ — Ինչո՞ւ է եկեր:

ՎԱՀՐԱՄ — Ի՞նչ գիտեամ. երեւի գործ մը: Բայց դո՞ւն
ինչու այդպէս վախցար:

ՄԱՐԻ — Զգիտեմ. այնպէս վատ էր. կարծես սիրտս... Ճիշդ
ըսէ', Վահրա'մ, ոչինչ չկա՞յ:

ՎԱՀՐԱՄ — Վա՛յ, երեխա՞յ ես, ի՞նչ պիտի ըլլայ: Ա՛յ, երթամ նայիմ ինչ կ'ըսէ. երկու վայրկեանէն կու գամ:

ՄԱՐԻ — (Վախցած կը բռնէ քեւէն) **Չէ՛, չէ՛, կեցիր. ես երթամ վերջը. ես արդէն երթամ պիտի: Ուրեմն վաղը կու գաս մեզի:**

ՎԱՀՐԱՄ — Կու գամ:

ՄԱՐԻ — Բայց կանո՛ւխ:

ՎԱՀՐԱՄ — Կանո՛ւխ:

ՄԱՐԻ — Դէ՛, ցտեսութի՛ւն: (Երկու ձեռքը կու տայ տղուն ու յամառ կը նայի անոր աչքերուն) Վա՛յ, աս ի՛նչ ապուշ զգացում է մէջս. այնպէս սիրտս կը ճմլէ. կարծես ալ երբե՛ք չեմ տեսնելու քեզի:

ՎԱՀՐԱՄ — (Փոխնիփոխը համբուրելով անոր երկու ձեռքերը) Ա՛խ, դո՛ւն, իմ անգի՛նս, հանգստացիր: Ինչպէ՛ս թէ չես տեսնելու: Կու գամ վաղը առտու կանո՛ւխ, կ'իջնենք նորէն ծովուն ա՛փը, ձեր այն թա՛ւ պուրակին ետեւը, կը փռուինք նորէն ժայռին կողքը, աւազին վրայ ու կը սաւառնինք նորէն վե՛ր, դէպի այն աշխարհները, ուր մոռացումն է ամէն հողեղէնի, ուր ձուլումն է հոգիներու, ձուլում բնութեան այն մե՛ծ հոգիին, որուն մէկ կտորն ալ մենք ենք: Եղա՞ւ:

ՄԱՐԻ — (Զուարթ ու յափշտակուած) Եկո՛ւր, եկո՛ւր, միայն կանո՛ւխ, կանո՛ւխ: (Արագ կը նետուի տղուն վիզը, կը համբուրուին ու դուրս):

Զ.

ՎԱՀՐԱՄ — (Աշխուժ կ'երթեւեկէ քիչ մը սենեակին մէջ, վերջը կ'երթայ, գուարթ ու լի շարժումով մը կը բանայ թափով կից սենեակին դուռը) **Բարե՛ւ, Դաւիթ:**

ԴԱՒԻԹ — (Հասուն տարիքի լայն մարդ մը. լայն մօրուհով, լայն գլխարկով: Սեմին վրայէն) **Ըսին՝ հի՛ւր ունէիր. գնա՞ց:**

ՍԱՐԻԿԵԱՆ — (Կը մտնէ Դաւիթ ետեւէն, լուռ կը կենայ հեռուն եւ տխուր, ուշադիր կը հետեւի շարունակ Վահրամին):

ՎԱՀՐԱՄ — Այո՛: Նոր լո՞ւր:

ԴԱՒԻԹ — (Հոտ փաշելով սենեակին մէջ) **Հոստեղ ինչ որ կեկան հոտ կայ: (Ծիծաղելով մատը թափ կու տայ Վահրամի վրայ) Է՛հ, մեր տղա՛յ: Խելօ՛ք ես աղբա՛ր, խելօքր դու՛ն ես. հաճե-**

լին օգտակարին հետ: Պէտք է քիչ մը բարեխառնութիւն:

ՎԱՀՐԱՄ — (Դժգոհ ու հրամայական) Թո՛ղ յիմարութիւնները:

ԴԱԻԻԹ — Ուրիշ խօսքով՝ գործդ խանգարեցի: Կը ներե՛ս, սիրելիս, կը ցաւիմ, բայց...

ՎԱՀՐԱՄ — (Նեղսիրտ) Քեզի բան կը հարցընեմ, նոր լուր չկա՞յ:

ԴԱԻԻԹ — Ի՛նչպէս չէ: Որ չըլլար՝ ինչո՞ւ էի այս կրակ թափուող կէսօրին ճամբայ ելլելու գալու: Ամէնէն առաջ ուրախը ըսեմ. ո՛չ Յակոբն է բռնուած, ո՛չ Մինասը. ձերբակալուածները բոլորովին երկրորդական մարդիկ են:

ՎԱՀՐԱՄ — (Անգուսպ բերկրացնով) Ի՞նչ կ'ըսես: Վա՛յ, կարծես սրտէս քար մը ինկաւ: Ի՛նչ ուրախ եմ, ի՛նչ ուրախ եմ:

ԴԱԻԻԹ — Հապա՛. ի գուր տեղը չէր, որ քէֆդ խանգարեցի:

ՎԱՀՐԱՄ — (Քիչ մը լրջանալով) Ուրեմն... ուրեմն իմ երթալուս արգելք չկայ այլեւս: (Մտածկոտ) Ուրեմն ճամբան բաց է. ուրեմն...

ԴԱԻԻԹ — Հա՛, հա՛. ալ ի՛նչ ուրեմն-ուրեմն: (Սարիկեանիմ) Ուրախութենէն լեզուն կապուեցաւ: Զգիտեմ, ի՞նչ կայ ուրախանալու: Դուք ալ կ'երթաս, մի՛ վախնար, դուք ալ կ'երթաս ու կը դառնաս էջ-նահատակ մը: Դո՛ւն ալ, մե՛նք ալ, բոլո՛րս ալ, դեռ շատ ճենճ է պէտք այդ կրակին: Ա՛ռ, նայէ՛: (Ծոցէն նամակ մը հանելով, կը նետէ անոր առջեւը, սեղանին):

ՎԱՀՐԱՄ — (Իսկոյն կը վերցնէ ու կը բանայ):

ԴԱԻԻԹ — (Մինչ վաւրամ կը կարգայ) Ես քեզի միայն ուրախ լուրը տուի. տխուրները հոտ են, դէզերո՛վ. ինքդ կարդա՛, ես սիրտ չունիմ: (Քիչ մը լուռ) Գէ՛շ է, գէ՛շ: Ճշմարիտ չգիտեմ, ասոր ծայրը ո՛ւր պիտի երթայ: Յուսահատելու բան է: Երբեմն կը մտածեմ անմիտ բան է ըրածնիս. միեւնոյն է, էլք չկայ:

ՎԱՀՐԱՄ — (Յանկարծ ընթերցումը ընդհատելով) Ե՞լք. կ'ըսես էլք չկա՞յ: (Նամակը ցոյց տալով) Ուրեմն թողնենք այսպէ՛ս, թողնե՞նք: Բայց կեա՞նք է ասիկա, ապրի՞լ է ասիկա, ասանկ ապրի՞լ կ'ըլլայ: (Կտրուկ) Ո՛չ, ո՛չ, հազա՛ր անգամ ոչ. կամ տա՛կը, կամ վրան:

ԴԱԻԻԹ — (Տխուր) Դեռ կարդա՛, դեռ կարդա՛:

ՎԱՀՐԱՄ — Է՛, ի՛նչ կարդամ: (Նամակը կը նետէ սեղանին) Նո՞ր պիտի կարդամ. ի՛նչ պիտի գրէ, որ նոր ըլլայ: (Քիչ մը լուռ, ու վերջը հանգիստ շեշտով մը) Ե՞րբ է Տրապիզոն մեկնող առաջին չոգենաւոր:

ԴԱԻԻԹ — Այսօր ի՞նչ է, Երեքշաբթի՛: Ուրեմն վաղը չէ միւս

իրիկո՛ւնը:

ՎԱՀՐԱՄ — (Մտածկոտ) Ըսել է դեռ երկու օր: Նախ պէտք է որ Սարգիսը տեսնեմ: Գնելու բաներ ալ կան: Հա՛, պիտի գնամ եւ կղզի. վերջն ալ... Հազի՛ւ, հազի՛ւ, երկու օրը հազիւ: Բայց ինչ որ է, պէտք է հասնիմ: Լսէ՛. վաղը հաւաքուի՛նք վերջին անգամ մը:

ԴԱԻԻԹ — Հաւաքուի՛նք:

ՎԱՀՐԱՄ — Կէսօրէն առա՛ջ:

ԴԱԻԻԹ — Կէսօրէն առա՛ջ:

ՎԱՀՐԱՄ — Քու մօ՛տդ:

ԴԱԻԻԹ — Իմ մօտս:

ՎԱՀՐԱՄ — Դու ե կը կարգադրե՛ս:

ԴԱԻԻԹ — Ես կը կարգադրեմ:

ՎԱՀՐԱՄ — (Դուռը մատնանիչ) Դէ՛, երթաս-բարո՛վ:

ԴԱԻԻԹ — (Ծիծաղելով) Վա՛յ, տնաչէ՛ն, թող մէյ մը խօսինք:

ՎԱՀՐԱՄ — Խօսելու բան չկայ:

ԴԱԻԻԹ — (Սարիկեանին) Որ բորենկեցաւ՝ պրծաւ:

ՎԱՀՐԱՄ — Գնա՛, գնա՛. մտածելու, կարգի բերելու բաներ չատ կան գլխուս մէջ: Թողէ՛ք ինծի առանձին. պէտք ունիմ վայր-կեան մը ինքս ինծի հետ մնալու:

ԴԱԻԻԹ — Աղէ՛կ. մնացի՛ր: (Սարիկեանին առջեւէն անցնելու ատեն) Մե՛ծ բանի վրայ է. յիմա՛ր ենք մենք, ամէ՛նքս ալ: (Դուրս):

Է.

ՎԱՀՐԱՄ — (Կեցած է, ձեռները ետեւէն յենած սեղանին, աչքերը գետին, անշարժ ու մտասոյզ):

ՍԱՐԻԿԵԱՆ — (Կամաց մը կը մօտենայ, կը կենայ դիմացը, մեղմ): Ուրեմն վաղը չէ, միւս իրիկո՛ւն: Վճռուած է, եւ այդ-պէս դիւրի՛ն:

ՎԱՀՐԱՄ — Դիւրի՞ն, կը կարծե՞ս: Այո՛, երբե՛մն, ասկէ քանի մը շաբաթ առաջ, ատիկա շա՛տ էր դիւրին: Ի՞նչ էր որ կեանքը ինծի համար. ըլլամ թէ ոչ՝ նոյնը չէ՞ր. ի՞նչ էի կորցնելու: Բայց հիմա գին ունի կեանքս, հիմա արեւս արժէք ունի ինծի համար: Եւ վերջապէս այդ աղջիկ՛ը, այդ քիւրեղ հոգին: Ես շա՛տ լաւ գիտեմ, որ վայրի, որ անսիրտ բան է իմ ըրածս. բայց ուրիշ ի՞նչ

կրնամ ընել:

ՍԱՐԻԿԵԱՆ — (Տեսակ մը ծամծամելով) Ինծի լսէ՛, Վահ-
րա՛մ: Դու ն... դու ն հիմա պէտք չէ՛ որ երթաս... լա՛ւ չէ որ եր-
թաս: (Պարզ ու կտրուկ) Դու ն դեռ չե՛ս երթար:

ՎԱՀՐԱՄ — Բայց ի՛նքզ ալ գիտես, չէ՞, թէ ի՛նչ աստիճան
կարիք կայ մարդու:

ՍԱՐԻԿԵԱՆ — Անշո՛ւշտ:

ՎԱՀՐԱՄ — Ուրե՞մն:

ՍԱՐԻԿԵԱՆ — Գործը չի մնար, անհոգ եղիր: Լսէ՛: Բախտը
ինծի չէ տուեր ոչինչ եւ ես չունիմ ոչինչ կորցընելու: Այսօր չէ,
վաղը, գալու էի ե՛ս ալ քու ետեւէդ: Վաղը ժողովին կերպ մը կը
յարմարցնենք եւ հիմա ես կ'երթամ քու տեղդ: Վերջապէս միեւ-
նոյնն է, չէ՞: Գուցէ բոլորովին քեզի փոխանակել չկրնամ, բայց
կ'ընեմ ինչ որ կրնամ: Իսկ դու ն դեռ ապրէ՛ քիչ մը քու բախտդ,
ապրէ՛ քեզի համար, (կատակով) ապրէ՛ քիչ մըն ալ ինծի համար.
վերջը... վերջը օր մըն ալ, երեւի, դու ն կու գաս իմ փոխարէնը
ու կ'ըլլանք սէր:

ՎԱՀՐԱՄ — (Հանգիստ) Այսպէ՞ս ուրեմն: Վա՛տ չէ, հիանա-
լի: Ի հարկէ՛, դու ն անձնուէր ու ազնիւ գինուոր մըն ես, անսա-
սան քու պաշտօնիդ գլխուն, իսկ ես մա՛նր հոգի մը, անձնական
վայելքներու ետեւէն ինկած:

ՍԱՐԻԿԵԱՆ — (Վրդովուած) Վա՛հ հրամ:

ՎԱՀՐԱՄ — Ո՛չ, ո՛չ, դեռ մի՛ պարծենար սրտիդ խորքը.
եւ քու կարծածդ չե՛մ:

ՍԱՐԻԿԵԱՆ — Վահրա՛մ, ամօ՛թ է, ինչե՛ր կը խօսիս:

ՎԱՀՐԱՄ — Գուցէ՛, չգիտեմ. բայց քու ըսածիդ անմիջական
պատասխանն էր, որ տուի: Այդ տեսակի... քնքուշ առաջարկութիւն-
ներ ամէն մարդու կարելի չէ ընել, նոյնիսկ ամենաազնիւ դիտում-
ներով: (Խիստ) Ինչ որ քարոզեր եմ ուրիշներուն, նոյնը եւ ինծի,
երկու չափ չի՛ պիտի ըլլայ գաղափարի գործին մէջ. երթալս պէ՛տք
է, ուրեմն պէտք է երթամ:

ՍԱՐԻԿԵԱՆ — Ես միայն քեզի թեթեւութիւն տալ ուզեցի.
կա՛ն բացառիկ վայրկեաններ:

ՎԱՀՐԱՄ — Բացառիկ ոչինչ չկայ, բացառիկ ոչինչ չի պիտի
ըլլայ: Ճիշդ է, մինչեւ հիմա աւելի դիւրին էր ինծի համար այդ
քայլը, բայց ատոր արժէքն ալ չա՛տ աւելի քիչ էր: Կայէնի նուէրն
էր ատիկա, չոփ-չոր գլուխ մը, անպէտք ամէնուն, անպէտք եւ իրեն:
(Ձերմ) Հիմա ուրիշ է: Հոգիին հոգի կը բերեմ եւ հիմա նուէր.
զոյգ մը բռնկած հոգի մեր ժողովուրդի հոգեկան բռնկումին,
զոյգ մը թա՛րմ հոգի ապագայի աւելի արեւոտ օրերուն: Մէ՛կ նուէր

մը ու երկո՛ւ սիրտ, կեանքո՛վ-սիրո՛վ դողդոջուն, երջանկութեան
անուրջներո՛վ թրփռատուն... Թող քաղցրանա՛յ քիմքը ազատութեան
մոլորի: (Թափով կը վերցնէ գլխարկը) Այո՛, վաղը չէ, միւս իրի-
կուն: (Դէպի դուրս):

ԶՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Ա.

ԹԵԹԵՒ ՇԻՆՈՒԱԾ ՊԱՒԻՅԵՕՆ ՄԸ

Շակատը երկփեղկ լայն դուռ՝ անմիջապես պարտեզի վրայ։ Սենեակը անկարգ. ճօճ ու ձիգ աթոռներ, սեղան ու եռոտանիներ. եռոտանիներուն վրայ թաց լաթով պատած կաճեր։ Ամէն կողմ՝ աթոռներուն, գետնին ու սեղաններուն՝ թափուած են ոլորած թղթեր, գրքեր ու նկարներ։ Հոս ու հոն մէկ-երկու արձան ու պատկեր։

Դուրսը սաստիկ հով է։ Ծառերուն ճիւղերը կ'օրօրուին ու կը քսուին դրան եզերքին։ Հեռուէն ծովուն շառաչը, խուլ ու միապաղաղ։ Մութ է։

(Նախ բիշ մը ատեն մարդ չկայ։ Կը մտնեն միասին Երուանդ ու Վահրամ)։

ԵՐՈՒԱՆԴ — Ահա՛ եւ իմ ճգնարանս։ Քեզի համար ասկէ աւելի առանձին տեղ չեմ կրնար գտնել։ Կեցի՛ր, մոմս վառեմ։ (Կը վառէ սեղանին վրայի մումերը) Կը հաւնե՞ս։

ՎԱՀՐԱՄ — (Արագ շուրջը ակնարկ մը նետելով) Հիանալի՛, հիանալի՛, ճի՛շդ որ ճգնարան։

ԵՐՈՒԱՆԴ — Այո՛: Երբ դուրսի աշխարհքի ունայնութիւնը ինծի կը տաղտկացնէ, կու գամ կը քաշուիմ իմ այս պաւիտեօնիս չորս պատերուն մէջը եւ հայեացքս յառած հո՛ն, ծովո՛ւն ու այս ծառերուն, կը թաղուիմ մտածումներուս ու իմ ներքին աշխարհքիս մէջ: Կը մտածեմ ու կ'աշխատիմ: Մարդս ինքն իր մէջ, ինքն իր ներքին, իր սիրած, իր շինած, իր ուզած աշխարհքին մէջն է, որ կրնայ միայն գոհ ըլլալ: Թէ չէ՝ դուրսի աշխարհքը ո՛չ մէկ բան իր տեղը չէ դրած. ամէն բան հակասական ու անմիտ: Դէ՛, նստէ՛. ինչքա՛ն ուրախ եմ, որ եկար. նստի՛նք, խօսի՛նք, յիշենք անցեալը, մեր ուսանողական չենթ օրերը:

ՎԱՀՐԱՄ — Երեւակայէ՛, որ այսօր քիչ մը դժուար հարց է ատիկա. ես փոքրիկ խնդիրքով մըն եմ եկեր քեզի:

ԵՐՈՒԱՆԴ — (Ծիծաղով) Հասկցա՛յ, հասկցա՛յ: (Կատակով) Բայց առաջւնէ ըսեմ, որ չունիմ:

ՎԱՀՐԱՄ — Ի՞նչ:

ԵՐՈՒԱՆԴ — (Բութն ու ցուցամատը իրար փոխելով) Մի՛ վախնար, կը ճարեմ:

ՎԱՀՐԱՄ — (Փպտուն) **Չէ՛**, անհոգ եղիր. այս անգամ խընդրածս պարտք չէ: Կամ եթէ... կ'ուզես, այո՛, բայց քիչ մը ուրիշ տեսակի:

ԵՐՈՒԱՆԴ — Խրթին կը խօսիս:

ՎԱՀՐԱՄ — **Չէի՞ր** կրնար, ա՛յսպէս, կէս ժամուան մը չափ քու այդ ցեխանոցդ ինծի փոխ տայիր:

ԵՐՈՒԱՆԴ — (Ձարմանքով) Աշխատանո՞ցս: Խնդրե՛մ, խընդրե՛մ, եթէ քեզի որեւէ բանի պէտքի գալ կրնայ: Ամբողջովին, իր եղած-չեղածով, բոլորը քու տրամադրութեան տակ:

ՎԱՀՐԱՄ — Այո՞: Շնորհակալ եմ: Այն ատեն կը խնդրէի, որ իմաց տայիր օրիորդ հարենցին, որ ես հոս եմ. եւ խնդրե՛մ, ինչքան կարելի է շուտ:

ԵՐՈՒԱՆԴ — (Ապշած) Վա՛յ. այսպէս ըսուած... Ժամադրու-թիւն մը. դո՞ւն... (Աչքերը շփելով) Վահրա՛մ, ասիկա դո՞ւն ես:

ՎԱՀՐԱՄ — Գնա՛, գնա՛, առաջ իմաց տուր, ետքը կը զարմանաս:

ԵՐՈՒԱՆԴ — (Սաստիկ գուարեանալով) Մեր Վահրամն ու սիրային ժամադրութիւն. սրանչելի է, սրանչելի: Նա՛, ալ աշխարհքիս երեսին անկարելի բան չկայ: **Չէ՛**, աղբա՛ր, մեր Պոլսի օդը վրադ եկեր է: Այս վայրկեանիս (կ'երթայ կր կոխէ զանգի կոնակը) Եւ , ինչպէս կը տեսնեմ, հաշակդ ալ տեղն է: Տեսէ՛ք, է՛, ո՛ր տեղերն է կտուցը մեկներ. հարենցին աղջիկը: (Կը նստի սեղանին առջեւ ու երկու տող խժըժելով) Ոչի՛ նչ, ոչի՛ նչ. պոռա՞օ՛:

Բ.

ՄԱՐԻԱՄ — (Տասնըհինգ տասնըվեց տարեկան նիհար ու թուխ աղջիկ մը, հայեացքը միշտ գետին, ձեռքերը գոգնոցին: Կը մտնէ ու դրան բովը կը կենայ):

ԵՐՈՒԱՆԴ — (Վեր ցատկելով նամակը կը դնէ աղջկան ձեռքը): Ա՛ռ սա նամակը, կը տանիս զիմաց ու ինքզ քու ձեռքովդ կը յանձնես օրիորդ Մարիին: Հասկոցա՞ր:

ՄԱՐԻԱՄ — (Գլխով կ'ընէ):

ԵՐՈՒԱՆԴ — Բայց չո՛ւտ, հիմա՛, անմիջապէ՛ս: Հապա՛, քեզի տեսնեմ:

ՄԱՐԻԱՄ — (Կը շտապէ դուրս):

Գ.

ՎԱՀՐԱՄ — Ի՞նչ աղջիկ է ասիկա:

ԵՐՈՒԱՆԴ — Խեղճ որր մըն է: Հազիւ է ազատուեր վերջին կոտորածէն:

ՎԱՀՐԱՄ — Ո՞ր կողմերէն:

ԵՐՈՒԱՆԴ — Հաստատ չգիտեմ. կարծեմ Տրապիզոնի մօտե-
րէն: Զէ՞ որ մենք ալ ան կողմերէն ենք մօրս գծով: Տիպի՞կ զէմք
է, չէ՞:

ՎԱՀՐԱՄ — (Տխուր) Այո՛, չա՛տ:

ԵՐՈՒԱՆԴ — Կեանքը դրեր է իր կնիքը: Ա՛յ, նայէ՛: (Կը վերցնէ եռոտանի մը վրայի ծեփին երեսէն քաց լաթը ու կը մօտեցընէ մոմը) Կը հաւնի՞ս:

ՎԱՀՐԱՄ — Վա՛յ, քանդակե՞ր էս: Յաջո՛ղ է, չա՛տ յաջող:

ԵՐՈՒԱՆԴ — Հապա ի՞նչ ընէի. մէյ մը, որ չա՛տ տիպիկ էր, իսկոյն աչքս խածաւ. մէյ մըն ալ, որ որրն ու խեղճը *moderne* ապ-
րանք է հիմա, կը քշուի: (Մոմը սեղանին դնելով) Վա՛յ, սա ի՛նչ
սոսկալի փոթորիկ է. վա՞յ թէ չեկաւ, մե՛ր տղայ:

ՎԱՀՐԱՄ — Ո՞վ:

ԵՐՈՒԱՆԴ — Ո՞վ պիտի ըլլայ. Մարի՛ն:

ՎԱՀՐԱՄ — (Պարզ) Կու գայ:

ԵՐՈՒԱՆԴ — (Կը նայի ու կը խնդայ) Ուրեմն... ուրեմն արդէն ձուկը ուռկանին մէջն է: Բարի յաջողո՛ւմ: Ոչի՛նչ. գուցէ քիչ մը քափրիզ, քիչ մըն ալ տարօրինակութիւն, բայց *en somme*, ոչի՛նչ, գէշ աղջիկ չէ՛: Իսկ տնեցի՞ք, բան գիտե՞ն:

ՎԱՀՐԱՄ — (Անտարբեր ուսը կը ցընցէ):

ԵՐՈՒԱՆԴ — Պա՛հ, կ'երեւակայեմ Հարենցի կատղած դէմ-քը: (Ուրախութեմէն ծափ կու տայ) Սքանչելի բան է դուրս գա-լու. վաղը երթամ քիչիկ մը վէրքը քրքրեմ, տեսնեմ պոռա՞յ պիտի: (Քիչ մը լուռ) Ուրեմն, ալ կը դառնաս Պոլսեցի, տուն-տեղ. երեւի տասնեակ հազար մըն ալ կը փրցընես. աղբարը չա՛տ է աքլորանա-լու, բայց մայրը կակուղ է, կու տայ: Եւ... եւ մնաս-բարո՞վ եր-կիր-մերկիր, ժողովուրդ-մողովուրդ եւ որ ըստ կարգին: (Մտերմօ-րէն անոր ուսին զարնելով) Է՛, կեանքն իր ճամբան ունի, տղա՛ս:

ՎԱՀՐԱՄ — (Լուռ ու շեշտ կը նայի անոր):

ԵՐՈՒԱՆԴ — Հապա՛. երազը որքան ալ սիրուն ըլլայ ու աստուածներէն զրկուած, երա՛զ է նորէն. ուշ կամ կանուխ արթըն-նանք պիտի: Է՛, հոգի՛ս, հոգէ ենք շինուած ու կապուած հողին: (Սիրտ տալու ու մխիթարելու շեշտով մը) Դուն առաջինը չե՛ս, ո՛չ ալ վերջինը: (Յանկարծ խօսուածքը փոխելով) Բայց քիչ մը աւելի զրական խօսինք. հիմա ի՞նչ է քու միտքդ:

ՎԱՀՐԱՄ — (Կարծես արթննալով) Ինչպէ՞ս:

ԵՐՈՒԱՆԴ — Երեւի, նոր ծրագիր մը, բան մը կ'ունենաս: Հիմա ի՞նչ ընել ես մտադիր:

ՎԱՀՐԱՄ — (Մտամոլոր) Ինչ ընել եմ մտադի՞ր:

ԵՐՈՒԱՆԴ — Հա՛, հա՛:

ՎԱՀՐԱՄ — (Ուսը կը ցընցէ):

ԵՐՈՒԱՆԴ — (Խնդալով) Այսի՞նքն: Շատ բան չըհասկըցայ քու ուսէդ:

Դ.

ՄԱՐԻԱՄ — (Կը մտնէ ու կը կենայ դրան մէջ):

ԵՐՈՒԱՆԴ — Նա՞, տուի՞ր:

ՄԱՐԻԱՄ — (Գլխով կ'ընէ):

ԵՐՈՒԱՆԴ — Կարդա՞ց:

ՄԱՐԻԱՄ — (Գլխով կ'ընէ):

ԵՐՈՒԱՆԴ — Բան չըսա՞ւ:

ՄԱՐԻԱՄ — (Գլխով բացասական):

ԵՐՈՒԱՆԴ — Աղէ՛կ. գնա՛:

ՄԱՐԻԱՄ — (Կ'ուղղուի դէպի դուրս):

ՎԱՀՐԱՄ — Աղջի՛կ, կեցի՛ր: (Կ'երթայ ու առանց այլեւայ-
լուքեան կը բռնէ անոր ծնօտը ու դէմքը կը բարձրացնէ դէպի
վեր, դէպի լոյսը) Ի՞նչ է քու անունդ: Ի՞նչ. Մարիա՞մ: Ատ ե՞րբ
էր, որ ձեր գիւղը կոխեցին: Առաջ ի հարկէ մորթեցին քու հայրդ,
եղբայրներդ, քար ու քանդ ըրին տունն ու տեղդ, ունիմ-չունիմդ,
քչեցին տարին քոյր ու հարսներդ, չէ՞: Մնաց մայրդ, ան ալ չոր-
ցաւ, չորցաւ, մինչեւ հատաւ ու վերջացաւ:

ՄԱՐԻԱՄ — (Կը սկսի հեծկտալու՝ ձայնը խեղդել ջանա-
լով):

ՎԱՀՐԱՄ — Աղէ՛կ, աղէ՛կ, բան չկայ. սովորակա՛ն պատմու-
թիւն:

ԵՐՈՒԱՆԴ — Ինչո՞ւ կը տանջես խեղճը: Թո՛ղ որ երթայ:

ՎԱՀՐԱՄ — (Առանց անոր խօսքերուն ուշ դարձնելու)

Մի՛ լար, աղջի՛կ, լալու բան չկայ:

ԵՐՈՒԱՆԴ — Թող լայ, վնաս չունի: (Թեթեւ մը աղջկան
թելէն հրելով) Գնա՛, գնա՛:

ՄԱՐԻԱՄ — (Դուրս):

Ե.

ԵՐՈՒԱՆԴ — Թող լայ, վնաս չունի. կը թեթեւնայ:

ՎԱՀՐԱՄ — (Վայրի խնդուհով) Թեթեւնա՛յ, լա՛յ՝ որ թե-
թեւնայ... Իսկոյն կ'երեւայ, որ սարսափելի քնքուշ սիրտ ունիս,
է՛: (Յանկարծ լուրջ ու բարկացած) Ո՛չ, յիմա՛ր, ո՛չ, ատիկա լա-
լով չի թեթեւնար, ո՛չ լալով, ո՛չ քանդակելով. ատիկա քու գիտ-
ցած ցաւերէդ չէ՛: Ո՛չ թէ լալ, այլ... (Խօսքը կ'ընդհատէ Մարիի
ներս մտնելը տեսնելով):

Զ.

ՄԱՐԻ — (Կը մտնէ արագ, երկար անձրեւնոցի մը մէջ

ամբողջովին փաթեցրած: Մագերը հովէն քափուած են հակտին ու ինքն ալ շնչատ):

ԵՐՈՒԱՆԴ — Ա՛հ, օրիո՛րդ Մարի: Խնդրե՛մ: (Անձրեւնոցը աղջկայ ուսէն առնելով):

**Մարի ու Վահրամ հարցական ու տեսակ մը յարձակողա-
կան կեցած են իրարու դէմ ու կը նային իրար:**

ԵՐՈՒԱՆԴ — (Վահրամին) **Եթէ ինծի պէտք ունենաս, սեղ-
մէ՛ կոճակը:** (Դուրս):

Է.

ՄԱՐԻ — Առտուն չեկա՛ր:

ՎԱՀՐԱՄ — Եկո՛ւր, եկո՛ւր նստէ: Գիտե՞ս... ինչպէ՞ս ըսեմ, որ քեզի համար պարզ ըլլայ... Արդէն դուն... դուն... է՛, ինչքան կարճ, այնքան լաւ: Մարի՛, վաղը այս ժամանակ պիտի ըլլամ չոգե-
նաւին վրայ, դէպի Տրապիզոն:

ՄԱՐԻ — (Կեցած է անշարժ ու անփոփոք):

ՎԱՀՐԱՄ — Ես արդէն քեզի ըսեր էի: Չէ՞, դուն գիտէիր, որ ասիկա պատահելու էր. եղաւ իմ կարծածէս քիչ մը աւելի կա-
նուխ: (Քիչ մը լուռ) Դուն գիտե՞ս, չէ՞, թէ ես որքան... Դուն կը հասկընա՞ս, չէ՞, հիմա իմ դրութիւնս: (Քիչ մը լուռ) Ինչո՞ւ ես լուր, չխօսի՞ս:

ՄԱՐԻ — (Հանդարտ վերցնելով անձրեւնոցը աթոռէն) Եր-
թաս բարո՛վ, բարեկա՛մս, բարի՛ ճամբա՛յ: (Կ'ուղղուի դէպի
դուրս):

ՎԱՀՐԱՄ — Մարի՛, Մարի՛:

ՄԱՐԻ — Դեռ ըսելի՞ք ունիս:

ՎԱՀՐԱՄ — Թո՛ղ, Մարի՛, թո՛ղ այդ սառնութիւնը, թո՛ղ
այդ կեղծիքը: Մո՛տ եկուր, խօսէ՛:

ՄԱՐԻ — Ի՞նչ կ'ուզես, որ ես խօսիմ քեզի, երբ դուն ինքդ
ամէն բան վճուրդ ես ու կարգադրեր: (Ծաղրով) Վաղը այս ատեն
կ'ըլլաս չոգենաւին վրայ, դէպի Տրապիզոն: Երթա՛ս-բարով, ուրիշ
ի՞նչ կրնամ ըսել: Ես ո՞վ եմ որ, ես ինչացո՞ւ եմ որ. քեզի համար
ի՞նչ նշանակութիւն ունի իմ գոյութիւնս, ի՞նչ արժէք:

ՎԱՀՐԱՄ — Մարի՛:

ՄԱՐԻ — Է՛, ձգէ՛, հոգիդ սիրես:

ՎԱՀՐԱՄ — Ես վճռեր եմ, ինչ որ պարտական էի վճռելու. ուրիշ կերպ վարուիլ չէի կրնար:

ՄԱՐԻ — (Զարացած) Է՛, պարտական, պարտական, միայն երբ խօսքը ուրիշներուն համար է: (Անձրեւնոցը նորէն աթոռին նետելով) Իսկ ինծի՞. ինծի պարտական չե՛ս:

ՎԱՀՐԱՄ — Դո՛ւն, սիրելի՛ս... ատ ուրիշ բան է:

ՄԱՐԻ — (Հետզհետէ տափնալով) Ես կ'ապրէի ինծի համար, գոհ թէ դժգոհ, իմիններուս հետ, ես ալ անոնցմէ մէկն էի. դուն եկար շուռ տուիր մէջս ամէն բան. նոր կեանքի յոյսեր, նոր շարժում, նոր յոյզեր: Ես հիմա օտար մըն եմ իմիններուս մէջ, խորթ ու կտրուած իմ տանս մէջ: Մինա՛կ, մինա՛կ, երբ դուն քովս չես, մինա՛կ բոլորովին, երբ բու շունչդ չի շոյեր ինծի: Եւ ահա՛ կ'ըսես, որ ձգես պիտի ու երթաս, (ծաղրով) որ վաղը այս ատեն կ'ըլլաս շոգենաւին վրայ, դէպի Տրապիզոն:

ՎԱՀՐԱՄ — Ա՛յ, եկեր եմ, որ խօսինք, կարգադրենք: (Մօտենալով կը բռնէ ձեռքը) Ըսէ՛, ընե՛մ, ինչ որ կրնամ:

ՄԱՐԻ — (Յուսահատ գլուխը օրօրելով) Խօսելու ոչինչ չըկայ. ես գիտեմ քեզի. վճռեր ես ու պիտի երթաս. պիտի երթաս ու պիտի մեռնիս:

ՎԱՀՐԱՄ — Ձէ՛. ինչո՞ւ. այդպէս ալ սեւ մի՛ տեսներ:

ՄԱՐԻ — Է՛, ձգէ՛, ստելը քու արուեստը չէ. դուն ինքդ ես ըսեր՝ «գնացողին դարձ չկայ»:

ՎԱՀՐԱՄ — (Ուսերը ցնցելով) Ո՞վ գիտէ. բա՛խտ:

ՄԱՐԻ — (Քիչ մը ատեն կը նայի անոր շնշտ ու լուռ եւ յանկարծ լալով կը փաթթելի վիզը) Մի՛ երթար: Ես չեմ կրնար ապրիլ առանց քեզի, չե՛մ կրնար, հոգի՛ս, կեա՛նքս: Եկո՛ւր, եկուր լսէ՛ ինծի: (Աւելի ամուր սեղմընելով տղուն, կը փաշէ բազմոցին վրայ) Ես տամ քեզի բոլորը, ինչ որ ունիմ, բոլորը ինչ որ կրնամ ունենալ, ա՛ռ, տա՛ր, տո՛ւր ընկերներուդ, թո՛ղ տանին, թո՛ղ ուղարկեն. միթէ՛ ատիկա գործ չէ՞: Միթէ՛ ատիկա հերիք չէ՞: Բայց դուն մի՛ երթար, դուն մնացի՛ր հոս, մնացի՛ր մօտս. մնացի՛ր ինծի համար, քու Մարիիդ համար:

ՎԱՀՐԱՄ — (Թաղելով դէմքը անոր թեւերուն մէջ) Ա՛խ, իմ խե՛ղճ Մարիս, իմ բախտս, իմ դժբախտս:

ՄԱՐԻ — Մե՞ղք է, չէ՞, մեղք է քու Մարիդ: Միայն քեզի ունի աշխարհիս երեսին, միայն քեզի՛, քեզի՛. չե՛ս թողներ անիկա, Վահրա՛մ, չե՛ս թողներ անիկա երեսի վրայ:

ՎԱՀՐԱՄ — (Կոտրելած) Ա՛խ, չգիտե՛մ, չգիտե՛մ...

ՄԱՐԻ — (Սիրտ առած) Կ'ապրինք միասին, կ'ընենք հոսկէ՛

ինչ որ կրնանք, ինչ որ մեր ձեռքէն կու գայ: Չե՞ս երթար, չէ՞, Վահրա՛մ: (Ամուր գալարուելով) Իմ արե՛ւս ես դուն, դուն իմ չո՛ւնչս ես, առանց քեզի լո՛յս չկայ, օ՛դ չկայ առանց քեզի, կեա՛նքըս ես դուն, կեա՛նք, կեա՛նք...

ՎԱՀՐԱՄ — (Յանկարծ կ'ուղղուի ընդոստ ու դեռ աղջկայ քեւերուն մէջ, ականջ կը դնէ դէպի դուրս, ուր փոթորիկը աւելի է սաստկացած, հովը կատաղի ու մերթ ընդ մերթ փայլակ): Իսկ հո՞ն... Իսկ հո՞ն... Սը՛ս, լսէ՛, լսէ՛. չե՞ս լսեր, Մարիամն է, որ կու լայ:

ՄԱՐԻ — (Ապշած) Ի՞նչ Մարիամ, խե՞նթ ես. հովն էր, վազեց տերեւներուն մէջէն:

ՎԱՀՐԱՄ — (Աղջկայ գիրկէն ետ-ետ փաշուելով) Մարիա՛մը, Մարիա՛մը, բոլո՛ր Մարիամները: Ա՛յ, գիւղը, որ կ'այրի. ամբո՛ղջ գիւղը. ա՛յ, հա՛յրը, եղբա՛յրը: Նայէ՛ գիւղերը, գիւղե՛րը, բոցե՛րը:

ՄԱՐԻ — (Վախցած) Ինչե՛ր կը խօսիս, Վահրա՛մ. Ի՞նչ բոց, Ի՞նչ բան, աչքիդ կ'երեւայ. փայլակն էր, որ անցաւ:

ՎԱՀՐԱՄ — Հապա այդ թշուառնե՞րը, որ կը կանչեն, կը կանչեն ցաւով ու տանջանքով, կը կանչեն բոցերուն մէջէն, կը կանչեն կիրճերուն մէջէն, կը կանչեն ճամբայ ցոյց տալու, կը կանչեն կուրծքը դէմ տալու. ամբողջ գիւղե՛ր, գիւղե՛ր, ամէնքը մէ՛կ բեբան, ամէնքը մէ՛կ ձայնով... Չե՞ս լսեր, ականջ դի՛ր:

ՄԱՐԻ — (Ինքը սարսափահար, ու աշխատելով որ հանգըստացնէ) Ատիկա ծո՛վն է, հոգի՛ս, ծո՛վն է կատգեր ու կը մոռնա՛ն:

ՎԱՀՐԱՄ — (Ոտի կը ցատկէ տեսակ մը յաղթական) Այո՛. ատիկա ծո՛վն է կատգեր ու կը մոռնա՛ն. ատիկա ծո՛վն է ցաւի՛ ու տառապանքի, որ կատգեր է վերջապէս, որ կատգեր է ու կը մոռնա՛ն: Ա՛տ է ճամբան, ժողովուրդի մը բարձրացման, ժողովուրդի մը ազատման միակ ճամբան: (Մեղմացած) Դէ՛, Մարի՛, տո՛ւր ինծի վերջին համբոյր մըն ալ ու մնաս-բարով: (Գլխարկը սեղանէն վերցընելով) Ամէն մարդ իր ճամբան:

ՄԱՐԻ — (Կը նետուի անոր նամբուն վրայ, կը կենայ ձիգ ու հպարտ, ձեռքի վնասկան շարժումով մը) Ես կ'արգիլե՛մ քեզի:

ՎԱՀՐԱՄ — (Ապշած) Ինչպէ՞ս:

ՄԱՐԻ — Ես կ'արգիլեմ քեզի:

ՎԱՀՐԱՄ — Բայց հայրենիքս է, որ կը կանչէ:

ՄԱՐԻ — Ես կ'ատե՛մ բո՛ւ հայրենիքդ:

ՎԱՀՐԱՄ — (Խիստ) Մարի՛, բո՛ւ հայրենի՛քդ ալ է:

ՄԱՐԻ — Ի՞մ: Իմ հայրենիքս դո՛ւն ես եւ միայն դո՛ւն. իմ

ամէն ինչս դո՛ւն ես, եւ միայն դուն. քեզմէ դուրս ոչինչ չկայ, ոչի՛նչ, ոչի՛նչ:

ՎԱՀՐԱՄ — Թո՛ղ Մարի՛, Թո՛ղ. ես իմս չեմ:

ՄԱՐԻ — (Տիրաբար) Դուն ի՛մս ես, ի՛մս, իմս:

ՎԱՀՐԱՄ — Չգիտես ինչ կը խօսիս:

ՄԱՐԻ — Կեցի՛ր: Ուրեմն վճռա՞ծ ես, վերջնապէս:

ՎԱՀՐԱՄ — Վճռողը ե՛ս չեմ: Վճռողը հոգեպէս ինկած ժո-
ղովուրդի մը ազնւացման պահանջն է, ստրուկ ու ոտքի տակ
ինկած ժողովուրդի մը յուսահատ ճիգը:

ՄԱՐԻ — (Չոր) Ե՞րբ պիտի մեկնիրս:

ՎԱՀՐԱՄ — Ըսի՛ արդէն. վաղը այս ատեն կ'ըլլամ Սեւ ծո-
վուն վրայ:

ՄԱՐԻ — Սե՛ւ... այո՛, սե՛ւ: Եւ ասիկա քու վերջին խօս-
քդ է:

ՎԱՀՐԱՄ — (Ուսը կը ցընցէ):

ՄԱՐԻ — Աղէ՛կ. գիտցի՛ր եւ իմ վերջին խօսքս: Վաղը այս
ատեն մեր տունը կը սպասե՛մ քեզի: Չուշանա՛ս, Վահրա՛մ, եթէ
իմ կեանքս արժէք մը ունի քեզի համար:

ՎԱՀՐԱՄ — (Վախցած) Մարի, Մարի՛, չես ըներ այդ յիմա-
րութիւնը:

ՄԱՐԻ — Ո՛չ, պէ՛տք է: Կ'ըսես պէտք է, որ երթաս. ուրեմն
պէտք է: Գնա՛, ես բռնի արգելք չեմ քեզի. ո՛չ կրնամ, ո՛չ կ'ու-
զեմ. միայն գիտցի՛ր, որ երթաս պիտի դիակիս վրայէն:

ՎԱՀՐԱՄ — Բայց քու ըրածդ անգութ բան է, Մարի՛, ան-
գութ ու աւելորդ: Իմ տանջանքս հերիք է ինծի: Խօ՛սք տուր ինծի.
ըսէ՛, ըսէ՛, որ այդ տեսակ անողոր քայլ չես առներ, Մարի՛, ըսէ՛,
որ դատարկ սպառնալիք էր ատիկա:—

ՄԱՐԻ — (Վիրաւորուած) Սպառնալիքը չի՛ վայլեր դէմքիս,
Վահրամ, ինչպէս եւ քեզի՛: Լեզուս խօսեր է քեզի մի՛շտ եւ միա՛յն
ճշմարտութիւնը: Պիտի գայ, ինչ որ գալու է անխուսափելի, ինչ
որ գրուած է ճակտիս: (Անձրեւնոցը աթոռէն վերցընելով) Վաղը
այս ժամուն կը սպասեմ քեզի:

ՎԱՀՐԱՄ — Մարի՛...

ՄԱՐԻ — (Արցունքները զսպելով) Կ'ըսես՝ ուրիշ ելք չու-
նիս, կ'ըսես՝ ատիկա է քու ճամբադ, քու պարտքդ: Ես կը հասկը-
նամ քեզի, եւ գիտեմ, որ անոյժ եմ: Գնա՛: Միայն հասկըցի՛ր, որ
ես այ ուրիշ ճամբայ չունիմ: Ես իմ հոգիս տըւի քեզի, անվերա-
դա՛րձ, անվերապա՛հ... Առանց հոգիի չեմ ապրիր: (Անձրեւնոցը
կը նետէ ուսերուն) Եթէ կ'ուզես ապրիմ՝ մնացի՛ր, մնացի՛ր մօտս,
բայց կամքո՛վդ, բայց առա՛նց խղճի խայթի, եթէ կրնաս: Ես արգելք

մը չէ՛մ քեզի, ես չեմ ուզեր արգելք ըլլամ քեզի: Ես չէ՛մ ուզեր, որ քեզի նուաստ գգաս ինծմով, ես կ'ուզեմ որ դուն հպա՛րտ ըլլաս ինծմով:

ՎԱՀՐԱՄ — Մարի՛, այդ բեռը մի՛ դնէր խղճիս:

ՄԱՐԻ — Ի՞նչ բեռ: (Խորհրդաւոր) Դու ն ըսիր ինծի՛ մեռ-նիլ պիտի գիտնանք:

ՎԱՀՐԱՄ — (Թափով) Ո՛չ. ես այդ տեսակ մահուան համար չըսի քեզի:

ՄԱՐԻ — (Տխուր) Ի՞նչ. ուրեմն կ'ուզես, որ հոգիս չորնայ ու կծկըւի. չէ՞ որ դուն կ'երթաս կծկըւած հոգիները բանալու:

ՎԱՀՐԱՄ — (Յափշտակուած ու աղաչանքով) Ի՛մ անգի՛ն աղջիկս, ի՛մ ագնի՛ւ աղջիկս, չէ՛, չէ՛ս ընէր այդ խենթութիւնը, չէ՛ս ընէր: Գուցէ կարողանամ շուտով վերադառնալ:

ՄԱՐԻ — (Տխուր կը ցընցէ ուսը):

ՎԱՀՐԱՄ — Գուցէ՛ եւ... ո՞վ գիտէ. գուցէ դուն ալ, գուցէ քեզի ալ... այն ատեն իմաստ կ'ունենայ կենքիդ զոհը: Բայց այս-պէ՛ս. անկարելի է: Աւելորդ արիւն է ատիկա, բոլորովի՛ն աւելորդ...

ՄԱՐԻ — Աւելորդ է՝ արգիլէ՛: Քու ձեռքդ է ամէն ինչ: Վա-ղը այս ատեն կը սպասեմ վճռիդ: (Կ'երթայ դէպի դուռը):

ՎԱՀՐԱՄ — (Խենթի պէս կը նետուի վրան՝ բռնելու, ար-գիլելու, գրկելու շարժումով մը):

ՄԱՐԻ — (Յանկարծ կը դառնայ, պաշտպանուելով ետ կը քաշուի դէպի դուռը, ու ձեռքի խրոխտ արգիլումով մը) Ո՛չ:

Վայրկեան մը քարացած կը դիտեն իրար:

ՄԱՐԻ — (Յանկարծ կը կծկըւի անձրեւնոցին մէջ ու դուրս):

ՎԱՀՐԱՄ — (Նախ կեցած է փչ մը ատեն անշարժ, փչ-փչ կը թուլնայ, ձեռքերը վար կը սահին ու փթ ու բերնին կ'իյնայ բազկաթոռին. հեծկլտուէ):

Դուրսէն կը լսուի հովին թափը, ծառերուն վայրի իրարան-ցումը ու ծովուն խուլ աղմուկը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐ

ԸՆԴԱՐՁԱԿ ՍՐԱՀ ՄԸ

Ճակատը լայն ու քաց դուռ մը, որ ծովահայեաց պատշգամբը կը հանէ. դրան երկու կողմէն երկու մեծ լուսամուտ: Զախէն կողմնակի խորքի դուռը Մարիի սենեակը կը տանի, աջէն առջեւի դուռը դէպի դուրս: Թեթեւ ու հարուստ կահաւորում: Առատ կանաչ ու ծաղիկներ մեծ ու փոքր թաղարներու մէջ թէ՛ ներսը եւ թէ պատշգամին վրայ:

Արեւը մայր է մտած: Երկինքն ու ամպերը, պատշգամն ու ներսը ամէն բան ողողուած է վերջալոյսի նարինջ-կարմիր պայծառ ճառագայթներուն մէջ:

Ա.

ՄԱՐԻ — (Կեցած է ձեռքերը ետին, մէջքն ու գլուխը յեմած պատշգամի դրանը եւ հայեացքը հեռուն):

ՄԱՅՐԸ — (Նստած կը կարէ: Քիչ մը լուռ: Ետքը կ'ընդհատէ կարը ու կը նայի աղջկան) *է՛, հերիք չէ՞, աղջիկ՛կս:*

ՄԱՐԻ — (Կը ցնցըւի, կը նայի մօրը, շուրջը ու վերջը նորէն ծովուն):

ՄԱՅՐԸ — *Մէյ մը իմանայի՛ ի՞նչ ունիս գլխուդ մէջ, ի՞նչ կը մտմտաս ատանկ անվերջ, աղջիկ՛կս, ի՞նչ կը մտմտաս:*

ՍԱՐԻ — *Նայէ՛, մայրի՛կ, ի՛նչ կարմիր երկինք է:*

ՄԱՅՐԸ — *Ատիկա՞ է մտմտութիւն:*

ՄԱՐԻ — *Նայէ՛, մայրի՛կ, արիւն ըլլայ կարծես:*

ՄԱՅՐԸ — Հա՞: (Կարը ժողվելով) Աղուոր իրիկուն է:

ՄԱՐԻ — Այո՛, մայրիկ, իրիկո՛ւն: (Մտածկոտ հեռանալով դռնէն) Այսպէս ուրեմն, եկաւ իրիկունը:

ՄԱՅՐԸ — Ինչպէ՞ս:

ՄԱՐԻ — Եկա՛ւ, կ'ըսեմ, իրիկունը, կարմի՛ր, արի՛ւն իրիկունը: (Տեսակ մը յոգնած շարժումով կը նստի բազկաթոռին):

ՄԱՅՐԸ — Երբ որ ասանկ կարմիր է իրիկունը, կը նշանակէ եղանակները փոխուելու են: Ալ ի՞նչ երկար-բարակ մտածելու բան կայ հոտ: Ելի՛ր, ելի՛ր, վա՛ր եկուր, երթանք քիչ մը այգին, կը բացուի՛նք:

Բ.

ԵՐՈՒԱՆԴ — (Կ'երեւայ սեմին):

ՄԱՅՐԸ — Ա՛յ, ի՞նչ աղէկ եղաւ, որ եկաք, պարո՛ն Երուանդ: Առէ՛ք Մարին ու իջէ՛ք այգին: Եկէ՛ք ընկուզենիներուն տակ: (Դուրս):

Գ.

ԵՐՈՒԱՆԴ — (Մօտենալով օրիորդին) Բարե՛ւ ձեզի. ի՞նչ բանի էք:

ՄԱՐԻ — (Գլուխը կը բարձրացնէ ու լուռ կը նայի անոր):

ԵՐՈՒԱՆԴ — Ի՞նչ էք նստեր հոստեղ մինակ:

ՄԱՐԻ — Ես... (Քիչ մը մտածելէն ետք) Կը սպասեմ:

ԵՐՈՒԱՆԴ — Կը սպասէ՞ք: (Ժպտուն) Որո՞ւն կամ ինչի՞ն:

ՄԱՐԻ — Ինչի՞ն: (Քիչ մը մտածելէն ետք) Ոչինչի՛ն:

ԵՐՈՒԱՆԴ — Ոչինչի՞ն: Խրթին է:

ՄԱՐԻ — (Լուրջ ու խորհրդաւոր, իր սենեակին դուռը մատնանիչ ընելով) Ա՛յ, տեսէ՛ք:

ԵՐՈՒԱՆԴ — (Հայեացքը կը լարէ դէպի դուռը, վերջը ժպտուն ու հարցական կը նայի օրիորդին):

ՄԱՐԻ — Չէ՞ք տեսներ:

ԵՐՈՒԱՆԴ — Ի՞նչը:

ՄԱՐԻ — Ձէ՞ք տեսներ:

ԵՐՈՒԱՆԴ — Մո՛ւթ է հոն. երեւի ձգուած են վարագոյրնե-
րը:

ՄԱՐԻ — Ձգուած են ձե՛ր վարագոյրները. երբ որ բացուին
կը տեսնէք:

ԵՐՈՒԱՆԴ — (Խնդալով) Այսօր լա՛ւ կատակի էք տրամադը-
ւած: Մինչդեռ երեւակայեցէ՛ք, մարդիկ մեղանշական են, միշտ գէշ
բաներ կը մտմտան... Երեւակայեցէ՛ք, ես կարծեր էի, որ դուք չիմա
գրգռուած ու չղային էիք ըլլալու, գոնէ, ա՛յնպէս, քի՛չ մը:

ՄԱՐԻ — Եւ ինչո՞ւ:

ԵՐՈՒԱՆԴ — Ձէ՞ որ գնաց մեր հերոսը. մե՛ր կամ ձե՛ր,
ինչպէս որ կ՝ուզէք:

ՄԱՐԻ — (Հանգիստ) Գնա՞ց. արդէ՞ն:

ԵՐՈՒԱՆԴ — Գոնէ երթալու էր. երէկ գիշեր միթէ՛ ձեզի
ոչինչ չըսա՞ւ:

ՄԱՐԻ — (Հանգիստ) Այո՛, ամէն մարդ իր ճամբան ունի
երթալու:

ԵՐՈՒԱՆԴ — Հրաշալի՛ է, հրաշալի՛ է ձեր այդ անվրդով
չարժումը: Ձէ, ես չէի սխալած: Ես իսկոյն ըմբռնեցի, որ ձեզի հա-
մար, սա՛նկ սիրուն քափրիդ մըն էր ասիկա, ուրիշ ոչինչ. եւ բարե-
բա խտաբար: Ես տեսնել չեմ կրնար այն սանդիմենդալ տափակու-
թիւնը, որով երկու էակ կը փակչին իրար ու կը մնան, եւ ալ ուրիշ
ոչինչ տեսնել չեն ուզեր ո՛չ չուրջը, ոչ վերը, ո՛չ կեանք, ո՛չ գեղեց-
կութիւն: Մէկ խօսքով՝ չա՛տ նեղ բան, չա՛տ արխայիկ ու գոեհիկ:

ՄԱՐԻ — (Երագկոտ) Այո՛. չատ արխայիկ ու գոեհիկ...

ԵՐՈՒԱՆԴ — Ա՛յ, ես կը հասկընամ ձեր զգացումը: Գուցէ
ինքներնիդ ալ չէք գիտակցիր, բայց ձեր հոգին *moderne* է: Եւ ես
ատիկա է, որ կը պաշտեմ ձեր մէջը, ձեր այդ լա՛յն, բա՛ց հոգին:
Ուր գեղեցկութիւնն է՝ հոն ալ կը հակիք. իսկ գեղեցկութիւնները
չատ են, չատ ու չուտ, չուտ ու վաղանցիկ, այսօր կայ, վաղը
հատաւ: Այսպէ՛ս, քիչ մը զայրոյթ, քիչ մը ճակատը կնճռել, վերջն
ալ ձեր այս սքանչելի փիլիսոփայութիւնը. «ամէն մարդ իր ճամ-
բան»:

ՄԱՐԻ — (Լուրջ) Իսկ ետքը:

ԵՐՈՒԱՆԴ — Ինչպէ՛ս:

ՄԱՐԻ — Իսկ ե՞տքը, ե՞տքը. ի՞նչ կը կարծէք:

ԵՐՈՒԱՆԴ — (Ժպտում) Ե՞տքը... Ետքը նո՛ր ծաղիկ ու նո՛ր
մեղր: (Խորհրդաւոր) Կեանքը վայելել գիտնայր բնտիր հոգիներու
բաժինն է:

ՆԵԿՏԱՐ — (Կը մտնէ լուռ ու խոժոռ):

ՀԱՐԵՆՅ — (Սաստիկ գրգռուած) Ո՛չ. *աս արդէն չափը անցաւ, աս արդէն...* (Տեսնելով Երուանդը կանգ կ'առնէ, բայց զայն ընդհատ զսպելու անկարող, կը շարունակէ) Է՛, *դուք տանու մարդ էք: Վնաս չունի: Դո՛ւք ըսէք գոնէ, պարո՛ն Երուանդ, դո՛ւք ըսէք: Աս ի՛նչ խայտառակութիւն, աս ինչ սկանդալ: (Մարիիմ) Հապա՛, հապա, ասանկ է, երբ մարդ երես կու տայ խոհանոցի ծառաներուն: Ըսէ՛ նայիմ, հիմա ինչով պիտի գոցես ուրիշներուն բերանը: Ինկեր ենք արար աշխարհքին բերանը, կը լսե՞ս, արար աշխարհքի:*

ՄԱՐԻ — (Լուռ ու հանդարտ կը նայի եղբօրը):

ՀԱՐԵՆՅ — Ի՞նչ կը նայիս երեսս ի վեր: Քեզի՛ կ'ըսեմ. *չե՞ս լսեր:*

ՄԱՐԻ — (Մեքենաբար) *Կը լսե՛մ, կը լսե՛մ, արար աշխարհքի: (Յանկարծ կարծես սքափելով) Աշխարհքի՛: Ատ ո՞ր աշխարհքէն կը խօսիս ինծի:*

ՀԱՐԵՆՅ — (Նախ ապշած կը նայի քիչ մը) Քիթի՞ս կը խնդաս: Հոս մինակ դուն չես, հոս մեր անունն ալ կայ, հոս մեր պատիւն ալ կայ: **Չէ՛**, չեմ թողներ, որ մեր անունը ձգես ամէնուն բերանը: Կը հասկընա՞ս ինչ կ'ըսեմ:

ՄԱՐԻ — Կը հասկընամ, ինչպէս չէ... քո՞ւ անունդ... քո՞ւ անունդ...

ՀԱՐԵՆՅ — (Բիրտ) Թո՛ղ այդ յիմար խօսուածքդ: (Աւելի հանգիստ, բայց կտրուկ) Լսէ՛, Մարի, քեզի մէկ անգամ ընդմիջտ կ'ըսեմ, որ այդ... այդ տղան միւս անգամ հոս ոտք չդնէ՛ պիտի: Հասկըցա՞ր:

ՄԱՐԻ — (Յանկարծ կ'ուղղըւի, կը նայի պատի ժամացոյցին ու ժամացոյցը մատնանիչ ընելով, հանգիստ) *Իսկ եթէ հիմա՛, հո՛ս, այս վայրկեանիս ներս մտնելու ըլլա՞ր:*

ՀԱՐԵՆՅ — Հիմա՞, հո՞ս, հո՞ս... (Քայլ մը կը մօտենայ քոյրը ու վանկերը ծանր շեշտելով) Ուրեմն այս բոլորին տակը բան մը կա՛յ: Ինծի նայէ՛, տեսնեմ: Իրա՞ւ է, որ դուն գացեր ես անոր բնակարանը:

ՄԱՐԻ — (Պարզ) Այո՛. յաճախ:

ՆԵԿՏԱՐ — (Բարձր ու սուր բրնձ մը կ'արձակէ եւ հպարտ ու արհամարհոտ կ'անցնի ու կ'ելլէ դուրս):

ՀԱՐԵՆՅ — (Կեցած է սարսափէն բերանը բաց, առանց գիտնալու ինչ ընելը):

ԵՐՈՒԱՆԴ — (Ետ փաշուած, ժպիտ մը շրթունքին անկիւնը):

Ե.

ՄԱՐԳԱՐ — (Հագուած ու փէտով, կը մտնէ տխուր, ձեռքը ծոցը):

ՄԱՐԻ — (Տեսնելուն պէս կը սպրդնի, ետ-ետ կ'երթայ դողդոջուն, մինչեւ կը հասնի թիկնաթոռի մը, թիկունքէն կը բռնէ մեքենաբար, կը յենուի ու կը մնայ անշարժ):

ՄԱՐԳԱՐ — (Ծանր կու գայ շիտակ դէպի աղջիկը ու զգուշ ձեռքը ծոցէն հանելով, նամակ մը կը մեկնէ անոր) *Ըսաւ, որ ասիկա ձեզի յանձնեմ անմիջապէս:*

ՄԱՐԻ — (Խեղդւած) *Ո՞ւր է ի'նքը:*

ՄԱՐԳԱՐ — *Ինքը... գնա'ց:*

ՄԱՐԻ — (Ծանր առաջ կը բերէ ձեռքը ետեւէն, կ'առնէ նամակը առանց իսկ վրան նայելու, հանգիստ պատռելու կ'ըսկըսի):

ՄԱՐԳԱՐ — (Վրան նետուելով, արգիլելու շարժումով մը) *Ի՞նչ կ'ընէք, ի՞նչ կ'ընէք, օրի՜րդ: Ըսաւ՝ չա'տ, չա'տ կարեւոր բան է, ըսաւ որ անպատճա'ռ, իսկո'յն յանձնեմ ձեզի. ըսաւ շտապեմ, որ չա'տ, չա'տ կարեւոր է:*

ՄԱՐԻ — (Կը դադրեցընէ պատռելը) *Ո՞ւր է ի'նքը:*

ՄԱՐԳԱՐ — *Ի՞նքը, ըսի, գնա'ց: Դրի չոգե՜նաւ:*

ՄԱՐԻ — (Հանգիստ եւ կանոնաւոր շարժումով մը կը շարունակէ պատռելը):

ՄԱՐԳԱՐ — *Բայց... բայց, օրի՜րդ... բայց...*

ՀԱՐԵՆՅ — (Կը մօտենայ ու կը փաշէ Մարգարի թեւէն) *Ինձի՛ դարձիր նախիմ, ի'նչ կը զրուցես:*

ՄԱՐԳԱՐ — *Ա'յնքան համոզեցի, որ չերթայ, աղա՛. ատանկ գէշ ժամանակներ են: Չլսեց: Է՛, Աստուած հետը:*

ՀԱՐԵՆՅ — *Ատ ո՞վ. որո՞ւ մասին կը զրուցես:*

ՄԱՐԳԱՐ — *Վահրա՛մը, աղա՛, քրոջս տղան:*

ՀԱՐԵՆՅ — *Քո՛ւ... քո՛ւ... ա՛ն... է՛, ի՞նչ է եղեր:*

ՄԱՐԳԱՐ — Երկի՛ր գնաց:

ՀԱՐԵՆՅ — Երկիր գնա՞ց:

ՄԱՐԳԱՐ — Հա՛, աղա՛. հիմա ճամբու դրի. հոնկէ կու գամ:
Անոր շոգեհաւը, ահագի՛ն, սպիտա՛կ, մեր ետեւէն կու գար. չու-
տով հոսկէ պիտի անցնի:

ՀԱՐԵՆՅ — (Ապշած կը դառնայ Մարիին, քիչ մը կը դի-
տէ ու դառնալով նորէն Մարգարին, մեղմացած) Աղէ՛կ. գնա՛
գործիդ:

ՄԱՐԳԱՐ — (Դուրս):

Զ.

ՀԱՐԵՆՅ — (Ծանր ու մեղմ) Աս ի՞նչ բան էր, Մարի: Ինչ-
պէ՞ս հասկընամ քիչ մը առաջուան բսածներդ:

ՄԱՐԻ — Ինծի հանգի՛ստ թող:

ՀԱՐԵՆՅ — (Սիրաշահելով) Աղէ՛կ, մի՛ վշտանար. գուցէ
քիչ մը խիստ խօսեցայ, բայց... բայց ատանկ բա՞ն կ'ըլլայ: (Հետըզ-
հետէ զուարթանալով) Վայրկեան մը հաւտացի բոլորովին. ի՞նչ
գիտեամ, դու ն անանկ տարօրինակ բաներ ունիս երբեմն. ինտո՞ր
իմանայի, որ խաղ էր բրածդ:

ՄԱՐԻ — Զգէ՛ ինծի հանգիստ:

ՀԱՐԵՆՅ — Աղէ՛կ, աղէ՛կ: (Խոր շունչ մը առնելով) Բայց
ի՞նչ սկանդալ պիտի ըլլար, Աստուած իմ, եթէ իրաւ եղած ըլլար,
ի՛նչ չի լսուած սկանդալ: Նեկտա՛ր, Նեկտա՛ր: (Դուրս):

Է.

ՄԱՐԻ — (Կեցած է անշարժ դեռ միշտ յենած աթոռին,
աչկերը անթարք կէտի մը յառած):

ԵՐՈՒԱՆԴ — (Կամաց մը մօտենալով) Անցա՛ծ ըլլայ:

ՄԱՐԻ — Թողէ՛ք, խնդրեմ, քիչ մը ինծի առանձին:

ԵՐՈՒԱՆԴ — Է՛, բան չունի՞ք. դարտա՛կ բան. *scene de famille*, կը պատահի: (Խնդալով) Բայց... խոստովանեցէ՛ք, չարացա՞ք,
չէ՞, որ Վահրամըր գնաց: Անչո՛ւշտ, ո՛չ ինքնին անհատը, խնդիրը

հո'տ չէ. բայց, սա'նկ, կանացի գայրոյթ մը, որ անիկա կտրեց ձեր այդ ոսկի շղթաները, որ չմնաց, փրցուց սանձերը:

ՄԱՐԻ — (Նախ լուռ ու լուրջ կը նայի անոր, վերջը սըրտանց ու հպարտ) Սանձեր ծամողը գետնէն գացողներն են. վերէն խոյացողը սանձի չի' գար:

ԵՐՈՒԱՆԴ — (Երկմիտ) Ա', ի հարկէ'...

ՄԱՐԻ — (Հպարտ) Եւ ան չէ'ր ըլլար ան, ինչ որ է', եթէ մնար: Իսկ ես սիրեցի անոր համար, որ ան է'ր, ինչ որ է'ր:

ԵՐՈՒԱՆԴ — (Խնդալով) Կը հասկընա'մ. դեկատա'նս եւ էմպրեսիոնի'զմ. գեղարուեստի վերջի'ն խօսքը: Որ կ'ըսեմ արտիստի հոգի ունիք:

Կը լսուի շոգեմաւի խոպոտ սոյլը:

ՄԱՐԻ — (Խայթըւածի պէս կը ցնցուի, կը սեղմէ ծնօտն ու բռնեցքները, առանց ետ նայելու) Ա'հ:

ԵՐՈՒԱՆԴ — (Նախ կարծես չի հասկընար, վերջը ծոկով դէպի պատշգամբ) Ա'խ, չոգենա'ւը:

Ը.

ՄԱՐԳԱՐ — (Ներս շտապելով, աջէն դէպի պատշգամբ) Նա'ւը, նա'ւը:

Անոր ետեւէն կու գան մայրը, Նեկտար եւ Հարենց. բոլորն ալ կ'անցնին պատշգամբ:

ՀԱՐԵՆՑ — (Անցնելու ատեն) Ի'նչ ալ չիք նաւ է ընտրեր. փարանի'ն ուրկէ է, չես հասկընար որ:

Թ.

ԵՐՈՒԱՆԴ — Երթա'նք, օրիորդ: Թաշկինակ մըն ալ դուք չարժեցէք ձեր այդ սանձակոծին: Ծի'շդ է, քչիկ մը շատ էր յիմարաւուն. բայց, է', ի'նչ ըրած, ատ ալ վերջապէս բոլոր վերերէն թոչող մարդոց թույլ կողմն է: Բան չկայ. երթա'նք:

ՄԱՐԻ — (Լուրջ ու խեղդուած) *Սպասեցէ՛ք դեռ:*

ԵՐՈՒԱՆԴ — *Նորէ՛ն հիանալի: Դուք այսօր ինծի ուղղակի կ'ապշեցնէք ձեր շարժումներուն ու ձեր խօսքերուն այդ աստիճանի պլաստիկութեամբը: Ա՛, հրաշալի էր մանաւանդ քիչ մը առաջ ձեր այն նշանաւոր նամակը պատուելը, ձեր այն աստուածային անդորրութիւնը: Ատոր փոխարէն ի՞նչ պիտի ընէր, եթէ ուրիշ մը ձեր տեղը ըլլար. լա՛ց, կի՛րք ու յուզում, (ծաղրով) կամ, ո՞վ գիտէ, գնդակ մը ճակտին: Ըսէ՛ք, ապուշութիւն չէ՞:*

ՄԱՐԻ — (Սառն ու յամառ, գամած է աչքերը տղուն): *Ի հարկէ՛, ի հարկէ՛:*

ՄԱՐԳԱՐ — (Պատշգամի դնելն) *Մօտեցա՛ն, մօտեցա՛ն, օրիո՛րդ: (Կը շտապէ նորէն ետ ու քաշկիմակ կը շարժէ):*

Միւսներն ալ խմբուած են ու յենուած են վանդակին:

ԵՐՈՒԱՆԴ — *Երթա՛նք, չանցնի՛: Վերջին բարեւ մը: (Կատակով) Վսեմ հրաժե՛շտ մը գոնէ:*

ՄԱՐԻ — (Ամբողջ մարմնով կ'ուղղուի, սաստիկ լարուած ու լուրջ) *Այո՛, իսկո՛յն, ա՛յս վայրկեանիս: (Կը մտնէ իր սենեակը):*

Ժ.

ԵՐՈՒԱՆԴ — (Նախ կ'երթայ դէպի պատշգամ, ետ կու գայ նորէն ու մօտենալով աղջկան սենեակի դրանը) *Դէ՛, օրիո՛րդ:*

Ներսէն ատրճաճակի պայթիւն:

ԵՐՈՒԱՆԴ — (Սարսափահար կը բարձրացնէ ձեռքերը)
Ա՛հ...

ՄԱՅՐԸ — (Ահառած ներս վազելով) *Ի՞նչ բան էր ատիկա. ո՞ւր է Մարին:*

Երրուանդ խելագարի պէս կը գետտոյ աղջկան սեմեակը:
Մայրն ու միսներն ալ անոր ետեւէն: Ծիչ, շփոթ, սարսափ:

Կը մնայ միայն Մարգարը պատշգամի դռներուն մէջ ապ-
շած ու շուար, ահագին կարմիր թաշկինակը ձեռքին:

Լուռ: Եւ դուրսը անելի մօտիկէն կը լսուի շոգեմալին սոյլը,
անելի խոպոտ ու անելի յաղթական:

